



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13643

891.99

U-52

1910



2003



25
7

ՎԵՒՈՆԳ ՄՆԿՈՅԵԱՆ

Մ Ա Յ Ր Ը

(ՆՈՐ Վ.Է.Պ)



ՄԱՏԵՆԱՇԱՐ ԱԶԴԱԿ ԹԻԻ 8

Հրատարակութիւն

ԱՐՄԻՒՆԻ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԳՐԱԳԱՆՁԱԾԱՆՈՅԻ

1911

Կ. ՊՈԼԻՍ

1000
1000
1000

891.99

Մ-52

mm

գրք

Մեթոդ

Մ Ա Յ Դ Ը

1001
265



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

3070

Հ Ա Յ Ա Ն

~~~~~  
Տպարան **ՍԱՆՃԱԳՃԵԱՆ**. — Պատր Ալի ճասէսի, 38, Կ. Պոլիս  
~~~~~

*
* *

Հին, փոռոս տեսակ մրն էր յանձնեց ինծի
ծերուկ միաբանը,

— Պահե՛, ըսաւ, — մահեա ետք միայն դուրս
հանե:

— Ինչո՞ւ. — հարցուցի իրեն:

— Բաներ կան, որ դժուար, շա՛տ դժուար է
ուրիշներու յայտնել. — կամացուկ մը փափսաց ա-
կանջիս:

Ծերուկը մեռաւ, անոր ձեռագիրը անա ընդ-
հանուրի սեփականութիւնն է:

Ղ. ՄԵԼՈՅԵԱՆ

1848

1849

1850

1851

1852

1853

1854

1855

1856

1857

1858

1859

1860

1861

1862

1863

1864

1865

1866

1867

1868

1869

1870

1871

1872

1873

1874

1875

1876

1877

1878

1879

1880

1881

1882

1883

1884

1885

1886

1887

1888

1889

1890

1891

1892

1893

1894

1895

1896

1897

1898

1899

1900

Մ Ա Յ Ր Ը

I

Գիշեր է : Խո՛ր լուսթիւն :

Մանկամարդ կին մը զգոյշ քայլերով դուրս
ելաւ ատենէն ու մութին մէջ առաջացաւ դէպ ի
թթենին :

Հսուեցաւ կրքոտ համբոյրի մը ձայնը , յետոյ
փափաուկ մը .

— Կամա՛ց , կամա՛ց . . .

— Ի՞նչ ըրիր , ի՞նչ . . . խեղդեցի՞ր , հա՞ ,
խեղդեցի՞ք . . . — կը շնչար կինը խուպոտ ու զրս-
պուած :

Համբոյրի թեթեւ շոյանքէ մը յետոյ , նորէն .

— Ըսէ՛ , ըսէ՛ , ի՞նչ ըրիր , հա՞ . . . խեղդեցի՞ք . . .
մեռա՞ւ . . . ծո՞վը ձգեցիր . . . ջուրին մէ՞ջ . . . ձու-
կերուն քո՞վ . . . ի՞նչ — և ա՛լ չկրցաւ շարունակել ,

խո՛ւլ հեծկատուք մը՝ բառերը խղղեց կոկորդին մէջ :

— Հանգստացի՛ր , հանգստացի՛ր . . .

— Տանըհինգ օր է , կը սպասեմ , կը սպասեմ . .

անխիղճներ . . . հրեշտակա . . . իմ . . . մէկ օր , մի-
այն մէկ օր . . . թողուցիք քովս . — ու նորէն սկսաւ
հեկեկալ :

— Հանգստացի՛ր կ'ըսեմ , կը սպասեմ . . .

— Ի՞նչ պիտի սպասես , — ձայնը կարեց
անկարծ կինը . — թէ ինչպէս խեղդեցի՞ք . . .

— Ո՞ղջ է :

— Մի՛ խարեր դիս , ես իմացեր եմ բոլորը ,
բոլորը . . .

— Սո՛ւտ է :

— Ի՞նչ . . . ո՞ղջ է . . .

Եւ երիտասարդը շրթուհիքը աղջկան աւանջին
վրայ դրած , հազիւ լսելի ձայնով կը սպասէր :

Ինքը առանձին՝ աղան տարեր է գիշերով
ծովը նետելու . բայց ծովուն մէջտեղ , երբ լուսինն
իրենց վրայ կ'ուղղէր իր շողերը , խղճահարեր է և
փոխանակ ջուրին մէջ խեղդելու՝ տարեր է վանքը
և կղզիի բարձր ժայռերէն մէկուն վրայ դրեր է :

— Ուրեմն ո՞ղջ է . . . — ուրախութենէն
կարծես խելքը թուցուց աղջիկը . — բայց ինծի
ըսին թէ խեղդուե՛ր է :


— Այդպէս ըսի նա :

Ճրագ վառուեցաւ տանը մէջ :

— Մայրս դիւ կը փնտռէ :

Համբոյր մը եւս : Եւ երկու սառեւերնէր ըստ
հուեցան իրարմէ :

Աղջիկը սուս գնաց , իսկ միւսը խաւարին
մէջ անհետացաւ աննկատելի կերպով :



II

Այդ ամառ՝ Տիկին Փէրին իր սովորութեան համաձայն վանք ուխտի էր եկեր առատ նուէրներով : Շրջակայ գիւղերէն ու քաղաքներէն շատ կիներ ու տղամարդեր հաւաքուեր էին : Կղզիի նըշնիներուն տակ խուռն բազմութիւնը կ'եռար ու կը ծփար : Մենաստանի դպրոցին փոքրիկ աշակերտները կը խաղային ծովափը աւազին վրայ, ժայռերուն մէջ :

Տիկին Փէրիի ընտանիքը մեծ էր ու հարուստ : Անոնց վրանը հաստատուած էր կղզիին ամենաբարձր տեղը, ուրիչ կ'երեւէին ամբողջ կղզին՝ շրջապատի ժայռերով, եկեղեցին՝ իր բարձր դանդակատունով ու իր գմբէթով, որ կարծես հովանին կը տարածէր ամբողջ շրջապատին, ծովին ու ցամաքին, մարդերուն ու կենդանիներուն վրայ . . .

Ամառ էր. նշնիի սաղարթախիտ ստուերներուն տակը, ծովէն փչող հովը կը մեղմացնէր, կը բարեխառնէր արեւի կիզիչ ճառագայթներուն առթած ջերմութիւնը :

Վանահայրը, մօտ յիսուննոց վարդապետ մը, ուրիշ ուխտաւորներու կարգին այցելեց նաեւ Փէրիինց :

Պզտիկներու խումբը ժայռերու վրայէն իջնելով կամաց կամաց՝ ծովափը կեցած նաւին մէջ

մտաւ : Վանահայրը ուշադրութիւնը հոն սեւեռեց .
— Է՛, ս՞վ գիտէ , տղա՛յ են , իսկ իրենց տակը ջո՛ւր
է , ջուր , անկո՛ւշա ջուր . . .

Պզտիկներէն մէկը սկսաւ նաւին կայմէն դէպ
ի վեր մազլցիլ . ընկերները կը գիտէին հետաքրք-
րութեամբ . վանահայրը հայեացքը չէր հեռացներ
անկէ :

— Չարածճի՛ , — շնչաց մտքին մէջէն ու ձեռ-
քերը ճակտին դրած դէպ ի կայմը սկսաւ նայիլ :
Սամնուռն ակնարկը այն կողմը դարձաւ : Փոքրիկ
մանուկը դէպ ի կայմին ծայրը կը սողար : Ժողո-
վուրդին մէջէն ալ հետաքրքիրներ սկսան այն կողմը
նայիլ . կայմին տակը մնացած մանուկները ուրա-
խութեան ճիչեր բարձրացուցին , ծափ դարկին ու
« հուռուա՛ . . . հուռուա՛ . . . » գոռացին :

— Վա՛ր իջիր , վա՛ր , — սկսան կանչել ծովի
ափէն աւելի երկչոտները :

— Կ'իյնա՛ս , բաւակա՛ն է , — կը կրկնէին ու-
րիշները :

Բայց փոքրիկը ուշադրութիւն իսկ չդարձնե-
լով՝ կայմը պինդ գրկած , կատուի մը պէս կը
մազլցէր դէպի վեր . երբեմն կը կենար , չարածճի
նայուածքով վար կը նայէր ու կը խնդար , կը կանչէր .

— Տեսէ՛ք , հէ՛յ , որքա՛ն բարձր ե՛մ :

Սամնէն անհանգիստը վանահայրը կ'երեւէր :
Քանի մը անգամ ուղեց ելնել , նաւ երթալ , բայց
արդելք եղան : Ինքնիրեն թող իջնէ , ըսին :

— Եօթ օր է որ վանք ենք բերեր, հազիւ մէկ շարաթ :

— Ո՞վ է ատ, — հարցուց խումբէն մէկը :

— Կրակ է, կրակ, — կրկնեց վանահայրը առանց աւշադրութիւն դարձնելու հարցումին, անդադար դէպի կայմը նայելով :

— Չա՛ր ծնունդ, — շարունակեց ու ժրպտեցաւ իր բարի ժպիտով :

— Որո՞ւ տղան է ատ, քաղաքէ՞ն է թէ՛ գիւղերէն. — հարցուց նորէն հոն նստողներէն մէկը :

— Ո՛չ քաղաքէն, ո՛չ գիւղէն, — պատասխանեց վերջապէս վանահայրը :

Ամէնքը ժպտեցան :

— Ըն՛չտ կ'ըսեմ, — հաստատական նշան ըրաւ վանահայրը :

— Հապա՞ :

— Աստուած գիտէ : — Կեցաւ ու անմիջապէս աւելցուց .

— Ծովէ՛ն է, ծովէ՛ն . . .

Տիկին Փէրին կարծես ելեկարական հոսանքէ մը ցնցուեցաւ :

Մանուկը դեռ կը մազլցէր կայմին վրայ : Ժողովուրդէն մաս մը ծովափը խոնուեցաւ . իսկ ան ո՛րքան կը բաճրանար, իր արդէն մանրիկ մարմինը աւելի կը պղտիկնար և կարծես կը ձուլուէր, կը միանար կայմին հետ, որպէս կոչտ մը՝ անոր կողին փակած . . . :

Վանահայրը աչքը չէր հեռացներ անկէ .
— Հիմա վար պիտի իյնայ հա՛ , պղտիկ է , պղտիկ ,
եօ՛թ տարեկան . . . դլուխը կը դառնայ . . .

Տղան հասաւ կայմին ծայրը ու բազէի մը
պէս կեցաւ հոն : Ժողովուրդի մէջէն լսուեցան ծա-
փեր և «հուռուաներ» . հետաքրքիրներու խումբը
կը ստուարանար տակաւ , իսկ ան իր տեղէն չէր
շարժեր . . . դեռ թեւերը կը տարածէր օդին մէջ
ու շարժումներ կ'ընէր :

Եղան մարդիկ որ խորհուրդ տուին դուա-
ցողներուն աղմուկ չհանել , չվախցնել , թող ինք-
նիրեն իջնէ , — կը յորդորէին :

Վանահայրի սիրտը կը արտփէր , ա՛յդ կը
մասնէին իր դիմագիծերուն կծկումները : Անդադար
կը մրմուար :

— Չար տղայ , չա՛ր տղայ , պղտիկ է , պղտ-
իկ , եօ՛թ տարեկան . . .

Ամէնքը հո՛ն , կայմին ծայրը կը նայէին , ուր
թառած էր տղան :

— Ծահէ՛ն , Ծահէ՛ն , — ձայներ լսուեցան ժո-
ղովուրդի մէջէն :

— Ծահէ՛ն , — կրկնեցին կայմին տակ կեցող
տղաները և ձայներու ալիքները դարնուելով ժայ-
ռերուն՝ արձագանգ տուին ամբողջ կղզիին մէջ .

— Հէ՛ն . . . հէ՛ն . . .

Ո՛չ մէկը , ո՛չ մէկը այդ ամենէն նոյն լու-
պէին չնայեցաւ կնոջ մը , ո՛չ մէկը չհասկցաւ թէ ի՛նչ

կը կատարուէր Փէրիի հոգիին մէջ . — Ան էր , ճիշտ էր արդեօք : Բայց ամենափոքր անդգոյշ շարժում մը . և ահա ջուրի յատակը կ'իջնէ . կամ կը ջախջախուի նաւի տախտակներուն վրայ . . . : Կ'ուզէր հոն , կայմին տակը վազել , թեւերը տարածած իր գիրկը առնել զայն , եթէ իշնալու ըլլար . . . այնքան հեռուէն արդէն թեւերը վեր կը բարձրանային . . . նորէն կասկած . . . գուցէ իրենը չէր . . . անիկա չէր . . . ալ ո՞վ կրնար ըլլալ . ծովէն եկաւ կ'ըսէր . նորէն կը լսէր վանահայրին ձայնը . — Ե՛՛թ տարի . . . , ա՛ն է , ա՛ն . . . բայց ո՞ւր էր մինչև հիմա , որքան էր փնտուեր . . . : Յետոյ՝ ուզեղը կարծես դադրեցաւ գործելէ , միայն աչքերը սեւեռած՝ անգիտակից յուզումով մը կայմին դտգաթը կը դիտէր . . . :

Մինչ ժողովուրդը շրջապատելով կայմէն իջած Շահէնը , վանահայրին քով կ'առաջնորդէր , այս վերջինը սկսաւ պատմել .

— Ծիշտ եօթ տարի առաջ էր , հը՞ , չէ՞ , — մտածեց պահ մը , — այո՛ , եօթ տարի մէկ ամիս կ'ըլլայ , ճիշտ է , առտուան աղօթքէն երբ դուրս եկայ , ըսի՝ ծովին ափը պտոյտ մը ընեմ : Հետս երկու վարդապետներ ալ կային . արեւը նոր կը ծագէր . անոնցմէ մէկը որ մեզմէ աւելի սուր լսողութիւն ունէր , յանկարծ ընդհատեց մեր խօսակցութիւնը

ու ականջ դրաւ . — Աս ի՞նչ ձայն է , ըսաւ . երեքս
ալ կեցանք , որ մեր քայլերուն ու աւազին ձայնը
արգելք չըլլար լսելու : Եւ իրաւ , սո՛ւր , կարծես
լացի ձայն մը կուգար .

— Ի՞նչ կենդանիի ձայն է , — հարցուց միւս
վարդապետը :

— Սո՛ւս , ըսաւ ան , որուն լսողութիւնը ա-
ւելի սուր էր , ու ականջը դէպի ձայնը դարձուց :
Ապա աւելցուց . — Մարդու ձայն է . . .

Մենք խնդացինք :

Մօտեցանք դէպի ձայնը՝ աւելի արագ քայլե-
րով :

Ձայնը մեզ կը շփոթեցնէր , երբեմն կարծես
ծովի մէջէն կուգար , երբեմն ցամաքին , երբեմն կը
թուէր թէ բարձրէն է , երբեմն վարէն : Աւազին
վրայ ոչինչ չէր երևար : Իւրաքանչիւրս մէկ մէկ
կողմ վազեցինք : Ձայնը կը շարունակէր ճշալ . . .
կը նայինք քարերուն տակ , ջուրին մէջը , աւազին
վրայ , մէկ մըն ալ՝ առաջին վարդապետը , որուն
լսողութիւնը աւելի սուր էր , սա՛ մեծ ժայռին
գլուխէն — վանահայրը մատով ցոյց տուաւ կղզիի
արեւմտեան կողմը , — կանչեց ձեռքերը տա-
րածած .

— Այտակ՛ղ , այտակ՛ղ . . .

Մենք վազեցինք . անիկայ խանձարուր մը
զրկած Սիմէոն Մերունիին պէս մեր առջեւ կանդ-
նեցաւ . . . :

— Մեր ուրախութեան չափ չկար, — շարունակեց վանահայրը քիչ մը լուելէ յետոյ, — առինք երեխան ու վանքը բերինք: Մնօթի էր խեղճը, կաթ տուինք: Է՛հ, երեւի Սատուած հուէր գրկած էր մեզի, չնորհակալ ենք իրմէ — ու գլուխը շարժելով աւելցուց. — է՛, որդի՛ք, մարդկային կիրքերն ալ Սատուծմէ են... — Ու կ'ուզէր որ խօսքը փակէր, երբ ունկնդիրներէն մէկը հարցուց.

— Յետո՞յ.

— Յետոյ ալ ի՞նչ կ'ուզէք. բնական էր որ մենք չէինք կրնար պահել. մկրտեցինք, ես իմ ձեռքովս մկրտեցի, ետքը կաթ տւնեցող կնոջ մը պահ տուինք մօտակայ գիւղերէն մէկուն մէջ: Եօթ տարի յետոյ.

— Ահա՛, — ցոյց տուաւ:

Եւ հետաքրքիրներու խումբէ մը շրջապատուած, վանահայրին դէմը կեցաւ կայտառ, գեղեցիկ դէմքով մանուկ մը. երկայն, խոպոպ մազերը կը ծածկէին ականջներն ու ճակատը. իսկ սեւ, վառվռուն աչքերը անհանդարտ չորս կողմ կը հայէին:

Պահ մը լուսթիւն տիրեց. ամենուն դէմքին վրայ գուրգուրալի ժպիտ մը կար. իսկ Շահէնը — հետաքրքիրները այդպէս մկրտեցին անոր ահունը — փոքրիկ ձեռքերով երկար մազերը աջ ու ձախ կը դարձնէր ու ճակտին քրտինքը կը սրբէր:

— Այդ ի՞նչ բրիւր, — հարցուց վանահայրը,
աշխատելով լուրջ դէմք տառնալ: Տղան դարձաւ
եստ, հայեցաւ դէպի կայմը ու ըսաւ.

— Հո՛ն բարձրացայ.

Ամենքը խնդացին, մանաւանդ երբ մատով
այ ցոյց տուաւ:

— Այդ տեսա՛յ, — հոյն լուրջ դէմքով աւել-
ցուց վանահայրը, — բայց ինչո՞ւ բարձրացար:

— Ընկերներս ըսին թէ չես կրնար, ես ալ
սի որ կրնամ, անոնք ըսին չես կրնար, ես... ը ը-
ըսի ի կրնամ, բարձրացայ... — ու տղան վերջին
բառերը արտասանելու ատեն կմկմաց քիչ մը:

— Իսկ եթէ վար իյնայի՞ր, — հարցուց վանա-
հայրը:

— Չէի իյնար...

— Իսկ եթէ իյնայի՞ր...

— Չէի իյնար... մեր գիւղի բարտինները ան-
կէ շո՛տ բա՛րձր են... — և այս ըսելով ձեռքերը
գլուխէն վեր բարձրացուց: Սպա՛ առանց սպասե-
լու վարդապետին հարցումին, շարունակեց.

— Հո՛ն, այնպէ՛ս լա՛ւ է, բարձր... ամեն
տեղ կ'երեւի, հէ՛... հեռո՛ւն... մեր գիւղը... և
մատը նորէն երկարեց դէպի ծովը:

Ամէնքը նորէն ժպտեցան:

Հետաքրքիրներու խումբը հեռացաւ:

Շահէն նստաւ վանահայրին դէմ:

Փէրին կ'ուզէր յայտարարել ամէնուն որ ի՛րն

է, իր դաւակն է ան, իր առաջին սէրի պատուը...
բայց պատիւը, իր մաքուր, անաղարտ պա-
տիւը... մարդիկ ոչինչ, ոչինչ չգիտեն այդ
մասին :

Անհուն փափաքով մը կ'ուզէր համբու-
րել անգամ մը այն դանդուր մազերը, սիրուն
գլուխը, այն կայտառ այտերը ու վառվռուն աչ-
քերը, որոնք այնքան իր առաջին սէրը կը յիշե-
ցնէին... Եւ Փէրիի երեւակայութիւնը աւելի
վառուեցաւ վերջին յիշողութենէն... միասին ան-
ցուցած ժամերը... ծովին վրայ... լուսնկայ գի-
շերով... ալ չկրցաւ համբերել :

Մինչ միւսները դանազան ակնարկութիւններ
րով մանուկի մասին կը խօսէին, Փէրին մօտեցաւ
տղուն, թեւէն բռնեց կամացուկ մը. անտէջ հո-
սանք մը անցաւ կարծես իր թեւէն, տարածուեցաւ
ամբողջ մարմինը ու իջաւ սրտին մէջ... տղան
հայեցաւ անոր երեսը...

— Երթանք իմ վրանը, ըսաւ կինը : Տղան
ընդդիմացաւ, չուզեց երթալ ու խոժոռ հայեացքով
կնոջ հայեցաւ :

Փէրին հայեացքը փախցուց անմիջապէս անոր
աչքերէն :

— Գնա՛, գնա՛, տղաս, — միջամտեց վանահայրը
— գնա՛, տես ի՞նչ կ'ըսէ տիկին մայրիկը :

Վերջին բառը, անգիտակցարար ըսուած, հո-
րէն ցնցեց կնոջ սիրտը :

Շահէն ոտքի ելաւ և հետեւեցաւ Փէրիին :

Վրանին տակ ոչ ոք կար :

Փէրին ուշադրութեամբ շուրջը նայեցաւ , վրանի դրան վարագոյրը վար իջեցուց . կուրծքին խորէն հաւաչ մը արձակեց , երկու ձեռքերով տրդուն գլուխը բռնեց , երեսը իրեն դարձուց և երկա՛ր նայեցաւ աչքերուն մէջ . . . ա՛ն էր , ա՛ն . . . իր առջի սիրականին աչքե՛րը , անոր պէս խո՛ր . . . անոր պէս մո՛ւթ . . . անոր պէս սե՛ւ գիշեր . . . : Սկսաւ համբուրել կատաղի համբոյրով , կը լզէր երեսը , աչքերը , գլուխը , մազերը . . . : Խեղճ ազան չէր հասկնար եղածը : Կեանքին մէջ առաջին անգամն էր որ այդպէս մոլեգին կիրքով կը սիրէին զինքը : Փէրի՛ համբոյրէն չկշտացած՝ կուրծքին կը սեղմէր փոքրիկ գլուխը , կը գրկէր , նորէն աչքերուն կը նայէր , նորէ՛ն կը համբուրէր , նորէ՛ն կը գրկէր և անոր հետ միասին ամբողջ շունչով կը հեւար . . . կը հեկեկար , կ'արտասուէր ու կը համբուրէր . . . :

— Ախ , հոգի՛ս . . . ես կը կարծէի թէ դուն կորսուե՛ր ես . . . մեռե՛ր ես . . . : — Բայց յանկարծ ուշաբերուելով՝ ինքզինքը ամփոփեց ու աչքերը սրբեց . .

— Հա՛ , քիչ էր մնացեր մոռնայի , ի՞նչ պիտի տայի քեզի .

Նորէն : գրկեց ու նորէն համբուրեց երկար . . .

1001
5192



Տղան ինքզինքը կտրանցուցած կեցեր էր անոր
առջև և թիչ մնաց պիտի արտասուէր. Փէրին
հկատեց այդ ու ըսաւ .

— Հա՛, ի՞նչ պիտի տայի՞ . . .

Ու մինչ բան մը կը վնասուէր, տղան դուրս
թռաւ վրանին տակէն . . . :

Փէրին ծնօտը երկու ասիերուն մէջ դրած՝ շա-
րունակեց հայիլ անոր ետեւէն . . . :

III

Հիմա արդէն Փէրին ունէր ա՛յնքան ուժ ,
ա՛յնքան հեղինակութիւն իր ընտանիքին մէջ , որ
կրնար Շահէնի պէս մէկ , նայն իսկ երկու տղայ
պահել իր քով իրր որդեգիր : Այդ մտածումով Փէ-
րին քանի մը օր յետոյ դիմեց վանահայրին , երբ ան
եկեղեցիէն իր խուցը կը դառնար :

— Աստուած օգնական , հայր սուրբ , — մօ-
տեցաւ Փէրին :

— Աստուած օրհնէ , — ժպտով մը ձեռքը
երկնացուց վանահայրը և Փէրիի նուրբ շրթուները
քսուեցան վանահայրի ոսկրուտ ձեռքերուն :

Փէրին լուռ էր և չգիտէր թէ ո՞ւրկէ սկսէր :

— Ձեզմէ խնդրանք մը ունիմ , հա՛յր սուրբ ,
և մեծ յոյս ունիմ որ չէք մերժեր . . . :

— Խեր ըլլա՛յ , ի՞նչ է , հետաքրքրութեամբ
հարցուց վանահայրը և աչքերը լայն բացած՝ կնոջ
երեսը նայեցաւ :

— Եթէ ուզէք՝ շատ դիւրին է , հայր սուրբ . . .

— Կա՛ւ , ս՛րդի , ըսէ՛ տեանեմ , ի՞նչ է :

— Եւ ինձի՛ մեծ բարերարութիւն մը ըրած
կ'ըլլաք , ու ես մինչև մահս երախտասպարտ կը մնամ
ձեզի . . .

Կնոջ ձայնը կը դողար . իրենց կեցած տեղէն
կ'երևւէր ամբողջ ծովը , ուր արևը մայր կը մտնէր

հեռո՛ւ հորիզոնին վրայ . Փէրին այն կողմը նայեցաւ
ու լուեց :

— Երեւի գաղտնի բա՞ն մը ունիա ըսելիք ,
հարցուց վանահայրը անոր վարմունքէն դարմայած :

— Ո՛չ , Հայր Սուրբ , — վրայ բերաւ անմի-
ջապէս . — ո՛չ , գաղտնի ի՞նչ պիտի ըլլայ , գաղտնիք
չկայ . . .

Բայց իր սիրտը կը ճմրուէր երկու ուժեղ հո-
սանքներու տակ . դեռ վերջնական կերպով չէր
որոշած թէ ի՞նչպէս ընէ . յայտնէ՞ր արդեօք վանա-
հայրին խնդրին ամբողջ մանրամասնութիւնը , թէ՛
ինչպէս որ գաղտնի է մնացեր մինչև հիմա բոլոր
մարդերէն , նորէն գաղտնի պահէր :

Եւ այս անորոշ , տարտամ դրութիւնը այն-
քա՛ն երկար տեւեց , որ վարդապետը ճարահատ
առաջարկեց .

— Լա՛ւ , որդի , եթէ հիմա կը քաշուիս
ըսելէ , թող կենայ , ուրիշ անգամ մը . խակ եթէ
խոստովանանք է , այն ատեն եկեղեցի եկուր կամ
խուցս , եթէ շատ կարեւոր է :

Փէրին արեւի մայրամուտը կը դիտէր . յե-
տոյ՝ զգարով սպասողական վիճակի ամբողջ անյար-
մարութիւնը , ըսաւ .

— Լա՛ւ , յետոյ , — ու մեկնեցաւ :

Վանահայրն ալ թէև հեռացաւ , բայց մինչև
իր խուցը հասնիլը , քանի մը անգամ ետ դարձաւ
ու կնոջ նայեցաւ :

Փէրին դուրս եկաւ բակէն , զղջաց թէ ինչո՛ւ մէկ անդամէն չըսաւ . մինչև միւս օր սպասելը ուշ կ'ըլլար . պէտք էր շո՛ւտ խմանալ , շո՛ւտ . և դեռ իրենց վրանը չհասած՝ կէս ճանապարհէն ետ դարձաւ կրկին ու վանահայրի սենեակին առջև կեցաւ :

Ծառան յայտնեց , որ կարելի էր ներս մտնել :

Ու Փէրին վանահայրին առջևն էր նորէն :

— Հա՛ , որդի , — այս անգամ սկսաւ վանահայրը նստած տեղէն , — կ'երեւի որ վիշտ մը , ցաւ մը ունիս , որուն կրնամ դուցէ՛ դարման մը ընել , կը տեսնեմ որ կը քաշուիս ըսելէ : Ըսէ՛ , մի՛ վախնար , մի՛ ալ քաշուիր . այս մօրուքը կը տեսնե՞ս , քանի՛ տարիներ է անցուցեր աղօթքի ու միայնութեան մէջ . մարդկային հողիի ի՛նչ տառապանքներ է կրեր այս սիրտը . — և ձեռքը կուրծքին վրայ դրաւ , — իսկ եթէ դադանիք մը ունիս , ըսէ՛ , համարձակ ըսէ՛ . այս տեղ մտածը՝ — ականջը ցոյց տուաւ — այս տեղ կ'իջնայ , — ձեռքը դրաւ սիրտին վրայ . — իսկ ասկէ , — մատը այս անգամ դրաւ շրթթունքներուն վրայ . — դուրս չի դար , վատա՛հ եղիր :

— Հայր սուրբ , ես կը ինդրեմ . . . — ու Փէրիի ձայնը կմկմաց նորէն . ապա լռեց :

Վարդապետը յօնքերը բարձրացուց և ուշադիր՝ շարունակութեան կը սաչասէր .

— Կ'աղաչե՛մ , Հայր սուրբ , ինձի՛ տուէք . ես կը պահեմ . . .

— Ի՞նչը , ո՞վ , օրհնեա՛լ ըլլաս , — այժմ աւելի
զարմայած՝ հարցուց վանահայրը :

— Ա՛ն . . . Հայր սո՛ւրբ , երէկուայ տղա՛ն :

— Ո՞վ :

Փէրին վարձեց աւելի անվրդով խօսիլ :

— Կը խնդրեմ , Հայր սո՛ւրբ , որ երէկուայ
այն տղան , որ կայմին ծայրը բարձրացաւ , ինծի
յանձնէիք :

— Ինչո՞ւ , որդի :

— Այնպէ՛ս , կ'ուզեմ որդեգրել :

— Ա՛յդ է ըսածդ , որդի՛ , այնպէ՛ս ըսէ . ալ
ի՞նչ քաշուելու բան կայ այդ տեղ :

— Ես կը կարծէի թէ կը մերժէք :

— Մերժե՛լ , հարկաւ կը մերժեմ , դունք քանի՛
հատ ունիս , աս ալ ի՞նչ պիտի ընես :

— Հոգ չէ , Հայր սո՛ւրբ , կը պահեմ , կը
մեծցնեմ . . . կը մեծցնեմ . . . ինծի , ինծի որդի կ'ըլ-
լայ ան ալ , ան ալ միւսներուն պէս . . . այո՛ , Հայր
սուրբ , ես ան ալ միւսներուն հաւասար կը սիրեմ ,
կը խնամեմ , կը սիրեմ . . . հաւատացէ՛ք , Հայր
սուրբ , իմ զաւակներուս պէս կը սիրեմ , անոնցմէ
դեռ աւելի , այո՛ , աւելի կը սիրեմ , հաւատացէ՛ք
Հայր սուրբ , հաւատացէ՛ք խօսքիս :

— Գիտեմ , ճարպիկ տղայ է , սիրուն , անոր
համար աչքդ մտաւ . . . բայց , ո՛րդիս , պէտք է
գիտնաս որ անիկա հայր ու մայր չունի , այսինքն
ծնողները անձանօթ են , և մենք այսքան ասրի որ-

քան խնամք ենք թափեր անոր վրայ : Դուն
պէտք է գիտնաս նաև, որ ծնողք ունեցողներէն
քիչերը մեզի օգտակար կ'ըլլան . չեն կենար , չեն ,
աշխարհի մեղքերը շատ հրապուրիչ են . . . երիտա-
սարդները կը թողուն վանքը . . . և մեր միաբանու-
թիւնը կը նուազի այդպէսով . անիկա մեր վանքին
սիւններէն մէկը պիտի դառնայ . դուն ի՞նչ պի-
տի ընես , այնքան ունիա . . . ան հայր ու մայր
չունի . . .

— Ես ալ ատոր համար ըսի , Հայր սուրբ ,
հայր ու մայր չունի , խեղճ է , ես զայն կը խնամեմ ,
կը պահեմ , կը մեծցնեմ հարազատ մօր մը պէս ,
խաչո՛ր , Հայր սուրբ , հարազատ մօրմէն դեռ աւել-
լին կ'ընեմ . . . :

— Ըսի քեզի , ո՛րդի , անիկա մեր քով կը
կենայ , յետոյ այս վանքին սիւններէն մէկը կ'ըլլայ ,
մեր յաջորդը , ան կը կենայ , մայր չունի . . .
մայրերը չեն թողուր . . .

— Մայր ունի . . . — ճշայ յանկարծ Փէրիին
և ինկաւ ծունկերուն վրայ , վանահայրին առջև .
— ո՞վ ըսաւ թէ մայր չունի , ան որք չէ՛ , չէ՛ , անի-
կա մայր ունի . . . մայր . . .

Վանահայրը ապշեցաւ կնոջ այդ յանկարծակի
այլափոխումէն : Իր առջև չոքած , սիրուն դէմքը
դէպի ինքը երկարած , ատամներու մէջէն կամայ ,
չչունչով մը կ'արտասանէր .

— Անիկա մայր ունի . . .

— Ո՞վ է անոր մայրը, — հարցուց վանահայրը մեղմիւ :

— Չեմ ըսեր, չե՛մ... անխկա մայր ունի, կը խնդրեմ, կ'աղաչեմ Հայր սո՛ւրբ, քու սուքդ ինկա՛ծ, սո՛ւր ինծի, սո՛ւր, ես մօր մը, հարազատ մօր մը պէս կը պահեմ, կը սիրե՛մ...

— Լա՛ւ, բայց դուն գիտե՞ս թէ ո՞վ է անոր մայրը...

— Եթէ ըսեմ, կուտա՞ս :

— Ո՞վ է անոր մայրը :

Կի՛նը վեր ելաւ տեղէն, կամաց մը մօտեցաւ դուռին ձեղքերէն նայեցաւ, նաև պատուհանէն. ու երբ համոզուեցաւ որ ոչ ոք չկայ, վանահայրի ալիանջին փափաաց.

— Ե՛հ ես եմ...

— Ը ը ը, — հարցուց վանահայրը մէկէն չըհասկնալով :

— Ե՛հ ս եմ, — կրկնեց նոյն ձայնով :

— Շահէ՛նի մայրը...

— Այո՛, Շահէ՛նին մայրը...

Վանահայրը մօրուքը շոյեց քանի մը անգամ, ճակտին կնճիռները ամփոփեց, ուղիղ կնոջ երեսը նայեցաւ ու լռեց :

Լուռ էր նաև Փէրին :

— Եօթ տարի է անոյեր այն օրէն, Հայր սո՛ւրբ, բայց առաջին անգամն է որ բերնէս դուրս կը թռի այդ դաղանիքը... և մինչև հիմա ո՛չ մէկ քահանայի չեմ խոստովանած այդ յանցանքս...

այդ մեղքս . . . , որովհետեւ մեղք չեմ համարած
քնաւ . . . թէ և մարդիկ ամենքն ալ մեղք կը համարեն.
Բայց իմ ներքին ձայնս . . . , իմ այտուղի ձայնը ու-
րիշ բան կ'ըսէ . . . և ամէն անգամ , երբ քահանայի
առջև չոքած փորձեր ևս խոստովանիլ , ամէն ան-
գամուն ալ մէկը կարծես ականջիս փափաացեր է .

« — Մի՛ վստահիր , մի՛ վստահիր , մարդիկ են ,
բոլորն ալ մարդի՛կ են . . . : »

— Բայց հիմա քեզի ըսի , Հայր սուրբ , որով-
հետեւ իմ դաւակա իմ քով ունենալ կ'ուզեմ , իմ
հարազատ դաւակա , իմ առաջինս . . . — սկսաւ հե-
կեկալ , — ներէ՛ , Հայր սուրբ , իմ առաջինս սէրիս
անդրանիկ . . . կ'ուզեմ իմ բազուկներուս մէջ ունե-
նալ , իմ աչքերուս տակ մեծցնել , իմ թեւերուս մէջ
անուցանել . . . : Եւ իմ միակ տենչանքը կատարուած
տեննելու համար ես ձեզի բայցի կեանքիս ամենա-
մեծ գաղանիքը . . . : Եւ դուք , ես վստահ եմ , կը
ներէք ինձի իմ երիտասարդական առաջինս մեղքս . . .

Վանահայրը լսւա կը մտածէր :

— Եթէ կ'ուզէք՝ ես ձեզի կը սրտամեմ , կը
խոստովանիմ ձեր առջև առաջինս և վերջինս անգամ
ամբողջ սրտամութիւնը իմ առաջինս մեղքիս , և
դուք , վստահ եմ , լսելով մօր մը խնդրանքը ,
չպիտի մերժէք . . .

Վանահայրը գլուխով հաստատական նշան
ըրաւ :

— Ես դեռ տաննհինգ տաղեկան աղջիկ էի .

պատմութիւնը կարճ է, Հայր սուրբ, ձեզ չեմ
ձանձրացներ : — Քիչ մը լուկէ յետոյ շարու-
նակեց :

— Մենք կը սիրէինք իրար ինչպէս մինչև
հիմա ոչ ոք չէ սիրեր . . . , մութ գիշերները ցորեկէն
աւելի լուսաւոր կը թուէին, երբ երկուքս իրարու
կը հանդիպէինք և ծովին բացերուն վրայ մէկ մէկու
սէրը կը վայելէինք : Դուն ալ երիտասարդ եղեր ես .
սիրե՞ր ես բնաւ առաջին սէրով — անաստակի հա-
մարձակութեամբ շարունակեց Փէրին, — այն անեղ
կրակը այրե՞ր է քեզ բնաւ գիշեր ու ցորեկ, օրեր,
ամիսներ, տարիներ . և մեր այդ բոցեղ սէրը ու-
նեցաւ իր սրտուղը . . . ա՛խ, մարդի՛կ, մարդի՛կ . . . :
Ամենքը կը նախանձէին մեզի . ան, իմ սիրականա
մեր գիւղի ամենակտրիճ, ամենազեղեցիկ երիտա-
սարդն էր . դուն ալ անշուշտ լսած կ'ըլլաս, « Կտրիճ
Մուրատր » :

— Որ սպաննուեցա՞ւ, — հարցուց վանա-
հայրը զարմացած :

— Այո՛, Հայր սուրբ, ան՝ որ գիշերով առ-
նին մէջ խողխողեցին անասիրտ կերպով . . .

— Ո՞վ ըրաւ, իմացա՞ք, — հարցուց հետա-
քրքրութեամբ :

— Այն օրը ոչ ոք չիմացաւ, բայց յետոյ,
տարիներ յետոյ միայն իմացայ ես :

— Ո՞վ էր, ո՞րդի, քեզի ըսի՛ սկիզբէն թէ
իմ սիրտը ծով է, ինչ որ ինձի կը պատմեա, ինչ որ

խմ այս ծերունի ախանջիս մէջ կ'իջնայ, խմ մարմինիս հետ գերեզման կ'երթայ . . .

Փէրին կեցաւ . կարծես կը դժուարանար հաղորդելու, բայց ներքին փափաք մը կար այսօր իր մէջ ունեցած բոլոր գաղանիքները դուրս թափելու, մանաւանդ որ վանահայրը աւելի քան վրատահելի էր և երկրորդ, որ այդ ամբողջ իրականութիւնը գուցէ կակղեցնէր ծերունիին սիրտը և իր ծոցը դարձնէր իր առաջին սէրին առաջին սրտուղը :

Եւ երբ Փէրին լռեց, վանահայրը կրկին հարցուց .

— Ո՞վ սպաննեց . . .

— Ա՛ն, որ այսօր խմ տէ՛րն է, ըսաւ Փէրին կամայ, դողդողացող ձայնով մը ու լռեց :

Վանահայրը աչքերը աւելի լայն բացած կնոջ երեսը նայեցաւ սրահ մը, ու մինչ անիկա թաշկինակը կը փնտռէր արցունքը սրբելու համար, հարցուց կոպտութեամբ .

— Քու ամուսի՞նդ :

— Ա՛յո՛, սրտասխանեց կլինը :

Ամէն տարի, ամառը, արձակուրդի ատեն Շահէնը քանի մը շարաթ կ'երթար Փէրիին քով, անոնց տունը : Եւ այդ ամբողջ ժամանակը կարծես, Փէրիին գուրգուրանքը կը սրակսէր միւս դաւակնե-

բուն վրայէն և բոլորը հաւաքած՝ Շահէնի վրայ կը
թափէր :

Եւ որպէսզի ուրիշները չնկատեն այդ բանը ,
Փէրին այնպէս ցոյց կուտար ամէնուն թէ խեղճ
տղայ մըն էր զոր իբրև հողեզաւակ կը սլահէր վա-
հահայրին խնդրանքով , իսկ իր մայրական սէրը ,
որքան կարելի էր , գաղանի ցոյց կուտար . . .

Գիշերներէն աւելի յարմար առիթ չէր կրնար
ըլլալ : Իր իսկ ննջատենեակին մէջ կը սլառկեցնէր
Շահէնը . չէ՞ որ որք էր ան , մե՛ դք էր , մայր չունէր . .
պէտք էր լաւ խնամել . . . հողիի փրկութեան հա-
մար . . . : Փէրին կամաց կամաց բարեպաշտ ու աղ-
քատասէր , որբախնամ կնոջ համբաւ կը ստանար . . . :

Կէս գիշերներուն շատ անդամ , երբ երազ-
ները կուգային խռովել իր հանգիստը , քունը կը
փախէր աչքերէն , խաւարին մէջ Շահէնին վրայ կը
հայէր , անոր թեթև շնչառութիւնը մտիկ կ'ընէր ու
ապա՛ զգուշութիւնով անոր անկողնին կը մօտե-
նար . . . :

Ամենքը քնացած կ'ըլլային , և՛ իր օրինաւոր
ամուսինը , զոր Շահէնի երևնապէն ի վեր աւելի
կ'ատէր , քան կը սիրէր , և՛ անկէ ունեցած երկու
զաւակները , և՛ տունի միւս անդամները : Ինքը
մինակ՝ որպէս արթուն սգի մը կը հսկէր այդ բո-
լորին վրայ , և մանաւանդ Շահէնին :

Խաւարին մէջ շօշափելով կը գտնէր փոքրիկ
Շահէնին գլուխը , շրթունքը այտերուն կը մօտե-

ցնէր ու կը համբուրէր, կը համբուրէր այնպէս՝
ինչպէս անո՛ր, Շահէնի հօր շրթունքները կը համ-
բուրէր տարիներ առաջ . . . :

Տղան կարծես կը զգար այդ ամէնը քունին
մէջ և երբեմն միայն գլուխը կ'երերցնէր ու շր-
թունքները կը շարժէր . . . : Փէրիին տաքն շունչը
անոր այտերուն կը քսուէր և անս՛ւշ շոյանք մը
կը զգար մանուկը իր թուշերուն վրայ :

Փէրին ս՛րքան լաւ կը յիշէր անցեալը, այն-
քան աւելի սէրի բուռն զգացումը կը զարարուէր
իւր կուրծքին տակ, սրտին մէջ և մանուկի փայփա-
յանքն ու դուրգուրանքը կը սաստկացնէր . . . : Մէկ
մըն ալ . . . , ալ չգոհացաւ միայն այտերը համբու-
րելէն, գրկեց գլուխը, յետոյ ամբողջ մարմինը և
կուրծքին սեղմեց . . . :

Փոքրիկ Շահէնն ա՛լ համակերպեցաւ . . . և
Փէրին աւելի ուժով իր կուրծքին սեղմեց Շահէնին
ամբողջ մարմինը . . . Շահէնը գունտ մը դարձած՝ իր
սրտին էր կպցուած, գլուխը երկու ողկոյղներու մէջ
թաղուած . . .

Իսկ երբ Շահէնը ա՛լ ուժաթափ՝ գրեթէ թուլ-
ցաւ, թեթեւ քրթմնջիւն մը հանեց, պատրաստ
լալու, նոյնիակ պուալու, որ ազատուէր այդ պլինդ
թևերէն, մայրը ետ քաշեց բազուկները, անգամ
մըն ալ համբուրեց ու հեռացաւ, թողլով տղան
մինա՛կ ու հանդիստ :

Ամառուան արձակուրդի օրերը շատ շուտ

կ'անցնէին և Շահէնը կը հեռանար իր բարեբարին
տունէն դէպի վանք — մենաստանը՝ սորվելու,
վարդապետութեան սրահատուելու :

Փէրին ամէն անգամ զրեթէ լալով ճամբու
կը դնէր և երկա՛ր, շա՛տ երկար անդունքով ու
կարօտով կտուէն, անոր ճամբուն կը հայէր . . .



IV

Տասնչորս տարեկան էր Շահէն, երբ այն տարին ամբողջ երեսուն աշակերտներու մէջէն առաջինը եղաւ : Վանքին բոլոր վարդապետներու ուշադրութիւնը իր վրայ էր դարձուցեր : Ամէնքը կը գուրգուրային վրան, իրենց վանքի պարծանքներէն մէկը պիտի ըլլար ան, մէկը եկեղեցիի նշանաւոր հայրերէն՝ որոնց նմանները շատ քիչ էին : Շահէնը խմաստուն էր և ընդունակ, եկեղեցական աղօթքները արդէն ջուրի պէս դիտէր. ձայն մը ունէր, որով երբ ամէն կիրակի պատարագի ատեն կ'երգէր՝ եկեղեցիին հոյակապ կամարները կարծես կը թնդային, սիւները շունչ ու կենդանութիւն կը ստանային, քարերը լեզու կ'ելէին և կը խօսէին մարդերու սիրտին, հոգիին հետ . . . : Ամէն անգամ, երբ ան կ'երգէր, ծերունի վանահայրը իր տեղը անշարժ կեցած՝ կ'արտասուէր ու կը նայէր, և ամէն անգամ որտի գոհունակութիւնով կը յիշէր այն օրը, երբ ծովի ափը իջաւ ու այն խանձարուրը դտաւ . . . :

Շահէնը միշտ կայտառ էր ու աշխոյժ. իր խմաստութեան հետ ունէր նաև մանկական չարածրձիութիւն մը, որ միշտ վանահայրին յատուկ ներողամտութեան կ'արժանանար :

Եթէ ամբողջ վանքին բնակչութիւնն ալ քընայած ըլլար, Շահէնը մինակը բաւական էր եռուն

կեանքով, թռչունի մը համան ճրվուէն ձայնով լե-
ցնելու ամբողջ կղզին . . . : Այդ էր պատճառը,
որ անոր երբեմնակի բացակայութիւնը՝ իր ինսամա-
կալ մօրը քով եղած ատեն, շատ զգալի կը դառնար
վանքին մէջ, և ասոր համար վերջին տարիները
շատ քիչ, կամ բնաւ թոյլ չէին տար բացակայելու
վանքէն : Մանաւանդ որ վանահայրը արդէն այն
համոզումին էր հասած, թէ ա՛լ ժամանակ էր մա-
նուկը կապելու, պաշարելու վանքի չորս պատերուն
մէջ, որ այժմէն, այդպէս փոքր տարիքէն ընդու-
նակ դառնայ մենակեաց կեանքին . . . : Աշխարհային
ունայնութիւններէն հեռո՛ւ . . . հեռո՛ւ . . . սուրբ
կեանքով պէտք էր ապրիլ . . . :

Ամենէն առաջ վանահայրը իր սուր ու փոր-
ձառու հայեացքով նկատեց, որ Շահէնը վերջին
ժամանակները սկսեր էր փոխուիլ : Կամաց կամաց
կը կորսնցնէր կարծես իր նախկին աշխուժութիւնը .
աւելի մուայլ ու մտածկոտ կը դառնար, ցորենադոյն
այտերը աւելի դեղինի էին մօտեցեր, վառ աչքե-
րուն մէջ դալուկ մշուշ մը կը նկատուէր, և որ ա-
մենէն աչքառուն էր, կիրակի օրերը եկեղեցիին
մէջ շատ կը դժկամակէր երգելու . խոյս կուտար,
կարճ կը կապէր կամ բնաւ չէր երգեր, իսկ երգած

ատեն ալ չկային այն նախկին կենսութիւն շնորհ
ու սրբուն կեանքները :

Յաճախ ժամերով , նոյն իսկ օրերով կը քաշ-
ուէր , կ'առանձնանար կղզիէ նշենիներու հովանիին
տակ , կամ ժայռի մը վրայ յենած երկա՛ր ու ան-
թարթ հայեացքով ծովին կը նայէր , ջուրի ավին
զարնուող ալիքները կը համրէր . . . :

Անգամ մը երբ այդպէս երեկոյեան կղզիին
մէկ հեռաւոր անկիւնը քաշուած՝ քամակին վրայ
սպառկեր , ձեռքերը գլուխին՝ երկինքի ամպերը կը
դիտէր , վանահայրը իր սովորական սրտոյտի քայլե-
րով անոր մօտեցաւ :

Շահէնը հնկատեց այդ , ու իր դիրքին
մէջ անվրդով կը դիտէր :

Վանահայրը չմօտեցաւ այլեւս . կեցաւ բա-
ւական , սպասելով որ ոտքի կ'ելլէ . բայց Շահէնը
անշարժ էր . . .

— Շահէ՛ն , — ձայն տուաւ վերջապէս վանա-
հայրը , առաջանալով դէպի ծով :

Շահէնը վեր թռաւ տեղէն , հագուստները
չտկեց և մօտեցաւ վանահայրին :

Վանահայրը նախ ուշադրութիւն չզարձուց
վրան , ապա մեղմ ձայնով մը ըսաւ .

— Իսկ չգիտե՞ս որ խոնաւ գետնի վրայ եր-
կար ատեն սպառկիլը մնասակար է , ինչո՞ւ այդպէս
կ'ընես :

Շահէն գլուխը վար կախեց և ոչինչ չսպասասխանեց :

Այլիքները սովորականին պէս երբեմն ևս կը քաշուէին, ապա կուգային աւազին երեսը լղելով վեր կը բարձրանային, կը հասնէին մինչև վարդապետին ու Շահէնին ոտքերուն տակ, կը թրջէին անոնց կօշիկները ու չարածճի խաղով մը խկոյն ևս կը քաշուէին, կրկին դառնալու պատրաստութիւնով . . . :

— Դուն հիւանդ ևս, — հարցուց վանահայրը Շահէնին, առանց երեսը նայելու :

Շահէնը լռեց :

Լռեց նաև վանահայրը : Ան կը հասկնար ու կը մտածէր թէ ի՞նչ փափուկ կէտի վրայ կը դրահուի խեղճ տղան, կը սլրալտէր միտքը, կը դիմէր իր ամբողջ անցեալ փորձառութեանը թէ ի՞նչ միջոցով կարելի էր խօսակցութիւնը բերել բուն խկայն կէտին վրայ, որ այնքան ալ զգալի չըլլար տրդուն և ինքն ալ կարողանար իր նպատակին հասնիլ :

Լռութիւնը չափազանց երկար տևեց. Շահէնը այդ ամբողջ ժամանակը գլուխը կախած կը նայէր ոտքերուն վրայ, զորս թրջեր էին չարածճի այլիքները :

— Այժմ ալ յաճախ կը լողա՞ս ջուրին մէջ, — խղեց լռութիւնը նորէն վանահայրը, ու ինքն ալ ուրախացաւ իր այդ գիւտին վրայ : Որոշած էր արդէն թէ պէտք է անուղղակի միջոցներ ցոյց տալ, առանց անմիջական կերպով զգացնելու . . . :

Շահէնը կարծես այդ օրը հակառակ իր սովորութեան՝ ուխտեր էր լուռ կենալ :

— Լողալը շատ օգտակար է , շատ , դաւն լողալ գիտես արդէն , չէ՞ : — Ու դարձաւ Շահէնին վրայ հայեցաւ պատասխանի մը սպասելով :

— Այո՛ , — պատասխանեց Շահէնը :

— Շատ օգտակար է լողալը , լավ սորվէ , լավ , ամէն օր լողա քիչ մը , որ չմոռնաս յետոյ : Վանահայրը յիշեց տեղ մը , բժշկական գիրքի մը մէջ կարդացած առողջապահական միջոց մը և ուղեց սատով գէթ օգտակար ըլլալ , ուրիշ ի՞նչ կրնար ընել

Շահէնը կը շարունակէր սօքերուն վրայ հայեցիլ : Ու յետոյ դողալ սկսաւ . կարծեց թէ խնայե՛ր են , ամէն բան գիտե՛ն . . . :

Շահէնը այդ օրը սովորականէն շուտ անկողին մտաւ : Գլուխը ծանր էր . . , արամադրութիւն չունէր բնաւ աշխատելու , կը ձանձրանար ու կը հեղուէր մանաւանդ ընկերներու աղմուկէն :

Երկար ատեն չկրցաւ քնանալ , աչքերը կը փակէր թէև , բայց քուն չկար , զանազան ձևի այլանդակ պատկերներ կը նկարուէին իր առջև . գլուխը կը սեղմուէր , կը բանար աչքերը , կը հայե՛ր անդարդ պատերուն , աղօտ ճրագին , կը ձանձ-

բանար այդ միայնութեան ու լուութեան մէջ, նա-
րէն կը փակէր աչքերը . . . :

Վերջին ժամանակները կրօնի ուսուցիչ վար-
դապետը շատ կը խօսէր մեղքի մասին, և մանուկ
Շահէնի փոքրիկ ուղեղը կ'ուզէր հասկնալ թէ մար-
դուս գործերէն ո՞րը մեղք է, և ո՞րը մեղք չէ . .
և յետոյ՝ ի՞նչ որ ամենագլխաւորն էր, կ'աշխատէր
որոշել թէ՛ եթէ մեղք գործեն ի՞նչ կ'ըլլայ, եթէ չը-
գործեն ի՞նչ կ'ըլլայ . . . : Բայց որքան կը մտածէր,
գլուխի ցաւը այնքան կը սաստկանար, և գարծկալ
նոյն հարցերը չէին տարփակիր անոր փոքրիկ ուղե-
ղին մէջ. աւելի կ'ընդլայնէին, կը մեծնային ու կը
խորունկնային ամէն կողմէն, և փոքրիկը ա՛լ աւել-
ի կը տանջուէր . . . :

Գիշերը բաւական անցեր էր. միւս աշակերտ-
ներն ալ եկան, քնացան, բայց Շահէնը դեռ կը
մտածէր. — ի՞նչը մեղք է, և ի՞նչը մեղք չէ . . .
յետո՞յ . . .

Վարդապետը կ'ըսէր, գիրքերու մէջն ալ
գրուած էր, ինքը որքա՞ն է կարդացեր մեղքի մա-
սին . . . և մէկիկ մէկիկ կը յիշէր Սաղմոսի այն
բոլոր տունները որոնց մէջ յիշատակութիւն կար այդ
մասին, զանազան ձևերով . . . :

Շահէնը յիշեց, որ իր երախացութեան ատեն
ալ միշտ կը կրկնէին նոյնը. երբ ինքը չարութիւն
մը ընէր. — մեղք է, մեղք է, — կ'ըսէին, և ին-
քը ա՛լ չէր ընէր . . . իրա՛ւ որ մեղք էր . . .

Բայց ա՛յն , ինչ որ հիմա կը պատահի իրեն ,
աս ա՛լ մեղք է արդեօք , և որքա՞ն մեղք է . . . :
Նրանի՛ թէ գիտցող մը լլկար որ հարցնէր , իմանար .
բայց որո՞ւն կրնար հարցնել , վարդապետի՞ն .
ամօթ էր . . . , ընկերներո՞ւն . է՛հ , անո՞նք ինչ կըր-
նային գիտնայ . . . :

Եւ Շահէնը չկրնալով որոշ եղբակացութեան
մը գալ , վերջին անգամ ալ աչքերը գոցեց հաս-
տատ վճռականութիւնով որ պիտի քնանայ . բայց
յանկարծ՝ միտքը ինկաւ որ չէ աղօթած այդ իրի-
կուն , կրնայ այս գիշերն ալ պատահիլ . . . , գլուխը
բարձրացուց և վերմակի տակէն երեք անգամ խա-
չակքնեց երեսը . շրթունքներու տակէն բան մը
մրմնջեց , և գլուխը նորէն բարձին վրայ դրաւ . . . :

Ինքն իր վրայ ջանք կը թափէր որ ուրիշ
բանի մասին մտածէ , բայց անհնար էր , միշտ նոյնը . .
նոյն նշովուած . . . ն էր որ կուգար աչքին առջև . . .

Աչքերը փակուեցան վերջապէս և քնացաւ
որպէս թէ . . . :

Ահա՛ եկեղեցին է նորէն , ինքը կ'երգէ , ա-
մէնքը իր վրայ կը նային , իր աչքերը յառած են
տաճարին մէջտեղ Մայր — Աստուածածնի մե՛ծ ,
չքեզ ու գեղեցիկ պատկերի՛ն վրայ , հայեացքը ա-
ռանց թարթելու անոր կապոյտ աչքերուն կը նայի
ու սուր , զիլ ձայնով մեղեդի կ'երգէ . . . , եկեղե-
ցիին մէջ լացողներ ալ կան , անոնց հեկեկանքի ձայ-
ները կը լսէ իր ետեւէն . . ինքն ալ կը յուզուի , ձայնը

կ'երերայ ու կը թրթռայ, քիչ կը մնայ որ կտրի .
բայց հաւաքելով ուժերը կը շարունակէ աւելի բար-
ձրը, աւելի զգայուն . . . : Եւ ահա ինքն ալ այդ երգած
վիճակին մէջ կը բարձրանայ . . . , միւսները բոլորը
վա՛ր, գեանի վրայ կը կենան, ինքը մինակ, ժամաշա-
պիկով դէպի վե՛ր, դէպի կամարները, սխներու գը-
լուխները կը խոյանայ, հայեացքը ուղիղ Մայր — Աս-
տուածածնի հայեացքին գամուած, ձեռքերն ու սու-
քերը կը շարժին օդին մէջ . թեթե է ինքը, թռչունի մը
պէս կը սաւառնի ու կը ճռուողէ կամարներուն տակ :

Յետոյ՝ կարծես Մայր — Աստուածածնի տեղը,
թաւշեայ դահաւորակին վրայ բազմեր է կին մը .
ուշադրութիւնով հայեցաւ . իրական էր, ճի՛շտ ան,
անոր աչքերն են, անոր գլուխը, անոր դէմքը,
անոր բերանը, անոր ձեռքերը . ինքը Փէրի՛ն է :
Աչքերը ուղիղ իր աչքերուն ուղղած, սեղանի
մէջտեղ նստեր է, բայց ան ի՞նչ գործ ունի հոս . . .
ուղիղ իր վրայ կը նայի, կը կանչէ, գլուխով նշան
կ'ընէ . . . : Եւ ինքը անոր գիրկը նստեր է, ճիշտ
ծունկերուն վրայ, իր սոքերը մինչև սրունքները
անոր երկու ծունկերուն մէջն են . երկու թեւերով
ամուր կուրծքին է սեղմեր, իր ձեռքերը անոր
ստինքներուն վրայ է դրած, կը նայի ու կը համ-
բուրէ, կը համբուրէ չրթունքները երկա՛ր, երկա՛ր .
կը ցնցուի . . . կը ցնցուի . . . ու կը տանջուի . . . :
Կ'ուղէ ազատիլ անոր գիրկէն . . . ամէնքը իր վրայ
կը նային, վարդապետներն ալ, դպիրներն ալ, բո-

լո՛րը , բոլո՛րը , եկեղեցիի միւս պատկերները . . . իրենց կը նային , ինքը կը տեսնէ այդ ամէնը , կ'ուզէ ազատիլ , փախչիլ դո՛ւրս , եկեղեցիէն դո՛ւրս . . . մե՛ղք է . . . մե՛ղք է . . . :

Բայց մտուա բազուկները պլլուեր են իրեն , բայց չեն թողուր . . . իր ոտքերը երկու ծունկերուն մէջ առած կը սեղմէ , ուժգին կը սեղմէ ու շրթունքներէն կախուած կը համբուրէ , բայց համբոյր չէ ատիկա , կը ծծէ . . . կը ծծէ . . . ու ինքը կը քամուի . . . կը ջղաձգուի . . . կը ծիւրի կը քամուի . . . և երբ մարեղու վրայ էր արդէն՝ մէկէն անդին ձգեց վերմակը , վեր թռաւ , ոտքի կեցաւ :

Նախ չհասկցաւ ուր ըլլալը , աչքերը բացաւ .
— Կնճարանը , անկողինը . . . :

Դէմքը կնճուեց , ծամածուեց զղուանքի արտայայտութիւնով , մատերը լարած թափահարեց ու շրթունքներուն մէջէն մրմնջեց .

— Նորէ՛ն . . . Նորէ՛ն . . .

Պահ մը կեցաւ այդպէս , աչքերը լայն բացած , կիսախաւարին մէջ շուրջը կը նայէր , չզխտնալով թէ ինչ պիտի ընէ . . . ապա նստեցաւ անկողնին վրայ , ճնօտն առաւ ատին մէջ ու սկսաւ մտածել . . . :

Այս ի՛նչ էր որ կը պատահէր իրեն . ինչո՞ւ չէր կրնար հանդիստ քնանալ . ուրիշ բան չէ , միայն հանդիստ քնանա՛լ . այս ո՞վ է որ այսպէս կը տանջէ . սատանանե՞րը արդեօք . ի՛նչ է ըրեր , ի՛նչ մեղք է դործեր , ինչո՞ւ այսպէս կը տանջուի . . . :

Գիշերները քուն , ցորեկը հանդիսաւ չունի : Յիշեց որ իր ախորժակն ալ գոյուեր է , բա՛ն չի կրնար ուտել . յետոյ մտածեց : — Այդ ոչի՛նչ , այդ ոչի՛նչ , գոնէ գիշերները հանդիսաւ քնանայի՛ . . . :

Գլուխը աւելի ծանրացած էր , ամբողջ մարմինը թուլցեր էր , կ'ուզէր պառկիլ , գոնէ քանի մը ժամ հանգստանալ . այս քանի՞ գիշեր է այսպէս : Բայց կը վախնար գլուխը նորէն վար դնելու , այդ սարսափելի երազները հանդիսաւ չէին տար , ուղեց մտնալ , չիշել այդ ամէնը , ուրիշ քանի վրայ , դասերու վրայ , դուրսի , ծովի , կղզիի , իրենց գիւղի մասին մտածել . բայց հնար չկար . — Միշտ նոյն Մայր - Աստուածածինը . — իր Փէրին կարծես իր վրայ կը նայէր . . . :

Պէտք էր աղօթել .

Եւ Շահէնը ինկաւ երեսին վրայ , գլուխը թաղեց բարձին մէջ ու սկսաւ իր գխացած բոլոր աղօթքները կրկնել իրարու ետեւէ ու արտասուել . արցունքը կուգար աղբիւրի պէս . . . ապա՛ նոյն վիճակին մէջ թմրութիւն մը եկաւ վրան ու պահ մը ինքզինքը մոռցաւ . . . :

Մեղքի գաղափարը անգամ մը դամուեր էր իր մանուկ ուղեղին մէջ և դուրս չէր կրնար ելլել , անհնար էր : Եկեղեցիի պատերը իրենց այլանդակ ու տարօրինակ նկարներով լեցուցեր էին մանուկ Շահէնի գլուխը . և այն ամէն այլազան կերպարանքներով պատկերները զորս իր զգայուն հայեացքով

երկար զններ էր լոյս աչքով, կամ մամերու ու
կանթեղներու լոյսին տակ, հիմա, ջղայնատ աչս վի-
ճակին մէջ որպէս երազ կրկին կը վերարտադրուէին
իր ուղեղին մէջ անհամեմատ աւելի մեծ, աւելի
հակայ, աւելի այլանդակ դիմադիծերով:

Եկեղեցիին աջ թևի պատէն, երկու սիւներու
մէջտեղ կախուած կար պատիկեր մը, որ վերջին Գա-
տատանը կը ներկայացնէր . . . :

Ինչ որ մարդկային մտեռանդ միտքը կըր-
նայ տուղծել ուրիշները տանջելու համար, այդ ա-
մէնը նոյն պատիկերին մէջ նկարուած էին պոռտա ու
վառ գոյներով, ու այդ կը համարուէր վանքին ա-
մենայաջող նկարը և ամենարնատիր հնութիւնը: Ինչ-
պէս միւս սղաները, Շահէնն ալ քանի՛ քանի՛ ան-
գամ ժամերով կեցեր է այդ պատիկերին առջև և
խոհուն ուշադրութիւնով մէկիկ մէկիկ զններ է բա-
լար մանրամանութիւնները . . . : Մուցուելի՞ք բաներ
էին արդեօք. բոլոր մեղաւորներն են հոն որ կը
տանջուին, կը չարչարուին . . . :

Ահա՛, ահա՛ սասանաներու խումբը. սե, եր-
կայն եղջիւրներով ու սորուն սուչերով, հագուստ-
ները տձև, իսկ կրունկներու ետևի կողմը երկարած
ու վրայ սորուած . . . աչքերը դուրս ցցուած՝ ձեռ-
քերը մէկ մէկ կամ երկերկու նիղակ ու սուր երկթա-
նիներ բռնած՝ սրարչաւ, խումբ մը մեղաւորներու
վրայ կը յարձակին. անսնցմէ մէկ քանիները դիմի-
վայր կախուած են, ուրիշները մշտավառ հնոցի մը

մէջ կայրին, կը տապալակին, անոնց վայնասունը մարդու ականջը կը խլայնէ, անոնց լայն ու աղաղակը մարդու ուղեղը կը հանէ . . .

Ահա՛ ոլորապտոյտ բոցը կը բարձրանայ վե՛ր, վե՛ր . . ., ծուխը բռներ է երկինքը, ոչինչ չերեւիր, մութ է ու խաւար . ո՛չ արեւ կայ, ո՛չ լուսին և ոչ աստղեր: Եղջիւրաւոր սատանաները վրայ հասան և իրենց ձեռքի երկժանիներով հնոցէն դուրս մնացած մեղաւորները կը վերցնեն ու արագ արագ կըրակի մէջ կը նետեն. անոնցմէ ոմանք բոցաշունչ հագուստներով դուրս կը թռչին կրակին մէջէն և փախչիլ կը փորձեն, սատանաները կը յարձակին, այս անգամ արդէն երկժանին ուղղակի մարմնին մէջ կը խոթեն և կատաղութիւնով կրկին կրակին մէջ կը նետեն . . . :

Դեերէն մէկն ալ իր վրայ վազեց. երկար, կարմիր երկժանին մտաւ իր աչքերուն մէջ, վերցուեցաւ ինքը օդին մէջ, հազիւ երերաց ու մէկէն ինկաւ խո՛րը, խո՛րը, կրակին մէջ. որքան կ'իջնէր վար, այնքան բոցերը կը սասականային, ինքը կ'այրէր, կը մրկէր պապակէն, կաթիլ մը ջո՛ւր, տուող չկայ. կ'այրի ինքը, կը ցամքի տակաւ, բայց միշտ ալ կենդանի է ու կը զգայ որ կ'այրի . . .

— Ժա՛մ հրամեցէ՛ք. — հնչեց յանկարծ ծառային ձայնը և Շահէնը վեր թռաւ տեղէն . . . :

Քիչ յետոյ՝ եկեղեցիին բարձր կամարները արձագանգ կուտային Շահէնի մեղամաղձիկ ու տանջը-

ւած ձայնին ելեւէջներէն . . . : «Ալէլուիա»ի վերջին վանկերը կ'երթային , կը կորսուէին եկեղեցիին մութ անկիւնները և կը շոյէին այն անշունչ նկարներու դարևոր ներկերը , որոնք այնքան վիշտ ու տառապանք էին պատճառեր մանուկ Շահէնի մատաղ սիրտին . . . :

Զմեռուայ սաստիկ ցուրտին պատճառով վանքի յարարերութիւնը բոլորովին դադրեր էր դուրսի հետ : Այդ պատճառով ալ Շահէն չէր կրնար Փէրին տեսնել , ինչպէս և Փէրին չէր կրնար Շահէնը տեսնել :

Ուսումի օրեր էին , պէտք էր աշխատիլ . և Շահէնը կը կարդար անվերջ , գիշեր ու ցորեկ . վանահայրը յաջողեր էր անոր փոքրիկ գլուխին մէջ մտցնել Հայր Սուրբ դառնալու ճիշտումը :

Բայց Շահէնը չէր կրնար հասկնալ թէ իր քով հաստղ Հրանդը ինչո՞ւ այնքան գեղեցիկ էր : Երբեմն կը կասկածէր թէ աղջիկ ըլլալու է . բայց ո՛չ , ինքը հաստատ գիտէր որ մանչ է . իսկ անոր ամբողջ շարժումներուն , անոր նայուածքին , անոր արտևանունքներուն , մորթի գոյնին ու այդ մորթը ծածկող նուրբ աղուամազին տակ կարծես բան մը կար , որ բնա՛ւ նման չէր միւս աղաներուն . . . :

Ներքին մզումով մը Շահէնը կը ձգտէր միշտ
անոր հետ խօսիլ, անոր հետ միասին պտտիլ, և
վերջապէս անոր ներկայութիւնը անհուն գոհունա-
կութիւն կը պատճառէր իրեն: Շատ անգամ անի-
կա դասը չէր գիտնար, անոր փոխարէն, ինք
Շահէնը կը դայրանար ու կը տխրէր, և ամէն ան-
գամ իր գործը թողած՝ անոր քով, գլուխը անոր
գիրքին, տետրակներուն վրայ ծռած դասը կը բա-
ցատրէր . . . :

Ինչո՞ւ այդպէս կ'ընէր, ինքն ալ չէր գիտեր .
միայն անոր շունչը իր շունչին հետ խառնուիլը
մեծ հաճոյք կը պատճառէր իրեն . . . : Ոչ միայն
շունչը, այլ երբ ձեռքը, մատերը անոր
մատերուն կը դպէին, նորէն անգիտակցարար
ցնցում մը կը զգար ոտքէն մինչև գլուխը:

Իսկ երբ բան մը չհասկցած ատեն, Հրանդը
իր երեսը կը նայէր, ինքն ալ անոր աչքերովէն,
այդ փայլուն ու քիչ մը կարծես մէկը փոքր, միւ-
սը մեծ բիրերուն մէջ կը նայէր, ալ կը մտնար
անոր հարցուցածը, կը մտնար իր պատասխանելիքը
և ապուշ կտրած հոն կը նայէր, ան ալ իրեն . . . :

Իրիկուն մը, իրենց դասարանը շատ տաք-
ցած էր. Հրանդը ծուկցաւ Շահէնի կողմը և բան
մը հարցուց. այնպիսի գիրքով մը իրարու քով ե-
կան, որ ծունկ ծունկի դպաւ գրեթէ և երկուքի
այտերը քիչ էր մնացեր իրարու քսուէին: Գիրքին
տառերը շատ մանր էին, ատոր համար գլուխնին

ծուեր էին . և այդ բոպէին այնպէս մը եղաւ որ , Շահէնին աչքերուն առջև թուղթի վրայի բոլոր տառերը իրարու խառնուեցան , և անհուն փափաքով մը ուղեց շրթունքը քիչ մըն ալ մօտիկցնել . . . , արիւնը այնպէս եռաց ստքէն մինչև գլուխը , որ բոպէ մըն ալ եթէ ինքզինքը չզսպէր , պիտի համբուրէր այդ տաքութենէն կարմրած այտերը . . . բայց մէկէն թողուց ու դուրս գնաց . . . :

Շահէնը երկար թափառեցաւ դուրսը , մեղքի գաղտնաբար նորէն սկսաւ տակն ու վրայ լնել իր հոգին և որոշեց յարարերութիւնները իսպառ կըտրել Հրանդի հետ , որու մէջ կարծես սասանան էր մտեր և զինքը կը փորձէր . . . :

Ինչպէս որոշեր էր , այնպէս ալ բրաւ : Առաջին պատեհ առիթին իսկ ամենաթեթեւ պատրուակով մը կուուեցաւ հետը . շատ խիստ կերպով ահարդեց , յետոյ ալ աւելցուց .

— Ա՛յ չխօսի՛ս հետս :


Հրանդ իր մանկական անմեղ հայեացքով ահար երեսը հայեցաւ ու լուց , յետոյ լացաւ :

Սամբողջ գիշերը Շահէն չկրցաւ քնանալ . միշտ անոր մասին կը մտածէր , և երբ կը պատահէր որ աչքերը կը փակէր , նորէն Հրանդն էր իր առջև , կա՛մ գլուխ գլուխի . . . կամ գրկախառնուած . . . :

Եւ միւս օր առտուն երբ Հրանդը երկչոտ հայեացքով Շահէնի վրայ հայեցաւ , վերջինս չկրցաւ այլևս ինքզինքը զսպել , ժպտեցաւ ակամայ , մօտե-

ցաւ անոր ու սովորականին պէս խօսիլ սկսաւ :

Նոյն օրը երկուքը միասին առանձնացան կղզիին անմարդարնակ կողմը, նստեցան ժայռերու վրայ դէմ առ դէմ, ալիքներուն նայեցան, ապա իրարու . . . , ա՛լ խօսք չէին գտներ փոխանակելու . . . իսկ երբ ա՛լ պիտի հասկնային իրար . . . խոյս կուտային, և մէկը երբ ալիքներու փրփուրին կը նայէր, միւսը ակնարկը կը ձգէր հեռո՛ւն, հեռո՛ւն, ուր ջուրի կապոյտը երկինքի կապոյտին կը միանար :



V

— Ատ Շահէնը ո՞ր դիւղէն է, որո՞ւ աղան է .
— Կը հարցնէր եկեղեցիի դուռին առջև կեցող գիւղացիներէն մէկը :

— Իմաստուն աղայ է, — պատասխանեց երկրորդ մը . — Աստուած պահէ, լաւ վարդապետ մը կ'ըլլայ :

— Այսօր ալ պիտի քարոզէ, — հարցուց միւսը նորէն :

— Այսօր ալ, միւս օր ալ, դեռ շաբաթ մը մեր քովը պիտի կենայ :

— Դեռ որչա՛փ ալ երիտասարդ է :

— Դուն վա՛նքն էիր այն օրը, — հարցուց երրորդ մը . — տասներկու տարի կա՞յ թէ չկայ, ասիկայ փոքրիկ աղայ մըն էր, կայմին գագաթը բարձրացաւ, ամէնքս վախցանք թէ ջուրին մէջ կ'իյնար . . . :

Եւ եկեղեցիի զանգակները հնչեցին ու ժողովուրդը սկսաւ հաւաքուիլ :

Շահէնի անունը կարճ ժամանակի մէջ տարածուեր էր ամբողջ գաւառը, ծեր, կին, երիտասարդ, մանուկ, անոր անունը կուտային ու անով կը սքանչանային :

Գիւղի ոչ շատ մեծ եկեղեցին կարճ միջոցի մէջ

լեցուեցաւ, հեռու տեղերէն իսկ մարդեր կուգային
Շահէնը լսելու . . . :

Ամէնքը կը զարմացնէր աւելի անոր երխտա-
սարդութիւնը. այդպիսի պատանիի մը բերնին մէջ
ո՞ւրիշ էր այդքան խմատութիւն : Մերունինները ի-
րենց գլուխները կը բանային, թեւերը տարածած
փաւք կուտային Աստուծոյ. առ այլ անոր սղոր-
մութիւնն էր :

Երեկոյ էր. արեւը մայր մանելու մօտ :

Եկեղեցիի արեւմտեան կողմի նեղ ու երկայն
պատուհաններէն արեւի շողերը անցնելով դմբէթի
կեդրոնէն կախուած ջահի պրիամակներէն ինկեր էին
դէմի հնամաշ վարագոյրին վրայ ու կազմեր էին
եօթ գոյներ : Իսկ ամբողջ եկեղեցին կարծես օծու-
ած էր դեղնաւուն գոյնով մը . . . :

Շահէնը սեղանին առջև կեցաւ : Փողովուրդը
ծաղապատիկ հատած յատակի վրայ, ակնասպիշ՝ աչ-
քերը անոր ուղղեց :

Պարզ, լայն թեւերով սև վերարկու մըն էր
հագեր Շահէն, իսկ գլուխը թղթովին բաց էր :

Դէմքը խաղաղ էր ու հանգիստ. այտերուն
երկու կողմը, ծնօտին վրայ, բարակ ու հուրը խաւ-
մը կը մրար սրպէս մօրուք, իսկ առատ յօնք մը
վերին շրթունքին վրայ՝ ցոյց կուտար դեռ երխտա-
սարդութիւնը հոր թեւակոխող պատանիի մը խօշ
թախնելու տարիքը :

Հպարտ, արծուասուս հայեացքը անդամ մը

Նեակեց ամբողջ ժողովուրդին վրայ, ապա սկսաւ
բառերը արտասանել հասիկ հասիկ . . . :

Կը խօսէր մեղմ ու սպարդ, ժողովրդական, հաս-
կընալի լեզուով . այդ օրը կը քարոզէր մեղքի մա-
սին, բոլոր մեղաւորներու մասին . . . :

Չայնը հետզհետէ կը բարձրանար, բառերը
աւելի որոշ ու շեշտուած դուրս կուգային բերա-
նէն, հանդիատ ու հանդարտ հայեացքը տակաւ առ
տակաւ կը վառէր . դիմադիծերը կը սրկուէին երբեմն
ու կը շարժէին . և վտարիկ եկեղեցիին կամարները
արդէն նեղ կուգային անոր երխտասարդական ուժ-
գին որոտումին . . . :

Իւրաքանչիւր բառը, իւրաքանչիւր խօսքը,
որ դուրս կուգար անոր բերնէն՝ ժողովուրդի սիր-
տին կը դարնէր . . .

Իսկ երբ Շահէնը ողոքիչ ու միանգամայն
սարսեցնող ձայնով սկսաւ ապաշխարութեան մասին
խօսիլ, աւելի ճիշտ երգել, ալ չդիմացաւ ժողո-
վուրդը, ամէն կողմէն այրեր ու կիներ սկսան փրդձ-
կիլ . . . ու որքան Շահէնը կ'ողեւորուէր, հեկեկան-
քի ձայնը այնքան կը սաստկանար ժողովուրդի մէ-
ջէն, արցունքը կը հոսէր շատերու աչքերէն . . .

Եւ Շահէնը որպէս յաղթող՝ կարծես իր ամ-
բողջ երխտասարդական հպարտութիւնով կը տիրէր
ամէնուն վրայ, ու երբ անգամ մըն ալ աջ ձեռքը
բարձրացուց, բեմբասացական ճարտասանութիւնով

մը ցուցամասը ուղղեց դէպի ժողովուրդը ու արտասանեց .

— Դո՛ւ , մե՛ղք ծնո՛ղ . . .

Հայեացքը մէկէն կեցաւ կնոջ մը աչքերուն մէջ , որ արտասուածոր իր վրայ կը նայէր :

Շահէնի ձայնը դողդղաց , յաջորդ խօսքերը ինքն ալ չիմացաւ թէ ինչ լսաւ . . .

Անորոշ , աչազան միտքեր ու զգացումներ պաշարեցին երխտասարդ քարոզիչին միտքը , անցեալն ու ներկան կայծակի արագութիւնով փայլեցան Շահէնի ճակատի ոսկորի տակ ու միտքերը իրարու խառնուեցան , նախկին ուժեղ շեշտը թուցաւ . . . :

Փէրին էր հոն նստեր . . .

Քարոզը վերջացաւ , բայց ժողովուրդը ոչինչ չհասկցաւ . . . :

Այդ տարին Փէրին սովորականէն շատ շուտ դնաց կղզին , ինքզինքը հիւանդ ձեւացուց . օդափոխութեան պէտք ունէր :

Վերջին տարիները , Փէրին չէր կրնար առաջուան պէս Շահէնը իր քով տանիլ ու շարաթնելով հիւր պահել : Վանահայրի արգելքէն աւելի Փէրին կը ճնշուէր իր ընտանեկան պարագաներէն ու մաւաւանդ Շահէնէն : Ան արդէն խելահաս մարդ էր , չէր կրնար հետը վարուիլ ինչպէս առաջ :

Ամէն անգամ, երբ Փէրին այս ու այն կողմէն գովասանքներ կը լսէր Շահէնի մասին, սիրտը տակնուվրայ կ'ըլլար, առաճնացած կ'արտասուէր շատ անգամ. ինչպէ՛ս այդպիսի երիտասարդ կտրիճ մը թողուր, որ երթա՛ր, կորսուէր վանքի մութ խուցերուն մէջ . . . :

Փէրին իր վրանը վանքին աւելի մօտիկ դարկաւ. բայց որովհետեւ օդը դեռ ցուրտ էր ու անձրեւային, վանքի սենեակներէն մէկն ալ իր արամադրութեան տակ առաւ : Վանահայրը խղճալով մօր մը տառապանքին, մեղմօրէն ժպտեցաւ՝ երբ Փէրին սենեակ մը խնդրեց, և առանց հոն եղողներուն բան մը նկատելի ընելու՝ Շահէնի սենեակին անմիջապէս քովինը արամադրելի ըրաւ անոր :

Երբ Փէրին սենեակը կը կահաւորէր, Շահէնը թեկերը խաչաձև կուրծքին վրայ ծալլած, մտախոհ, կ'երթեկէր բակին մէջ գլուխը կախ, երբեմն միայն աչքի տակէն կը նայէր դէպի Փէրին ու ինքն ալ չհասկնալով իր մխտքերն ու զգացումները, քայլերը աւելի կ'արագացնէր . . . , կ'ուզէր մօտիկնալ, խօսիլ հետը, բայց տեսակ մը լրջութիւն բռներ էր զինքը, նաև ամօթխածութիւնը. կը դիմադրէր իր ներքին զգացումներուն, և չէր ուզեր որ առաջ ինքը մօտենայ . . . :

Փէրին ալ թէև նախ չտեսնել կը ձեւացնէր, բայց յետոյ առիթով մը անոր քովէն անցաւ ու ըսաւ .

— Բարև , Շահէն :

— Բարև , — ըսաւ Շահէնը պահ մը շփոթելով ,
չխմանալով թէ ինչ պիտի պատասխանէր կամ ինչ-
պիտի վարմունք ունենալու էր :

— Աս կղա՞ւ , վերջին տարիները դուն չեկար
լիւմ քովս . հիմա ես կուգամ քու քովդ :

Շահէն անյարմար դրութեան մէջ էր :

— Իսկ հիմա մենք դրացիներ ենք արդէն ,
— խղեց լութիւնը Փէրին :

— Այո՛ , — պատասխանեց Շահէնը ու կօշիկին
ծայրով սկսաւ աւաղին վրայ գիծեր քաշել . . .

Այ խօսք չդռնելով Փէրին երկինքը հասկեցաւ
ու աւելցուց .

— Այս տարի օդերը որքա՞ն գէշ են :

Շահէնը գլուխը վերցուց ու մեղմ ժպտեցաւ ,
հայեացքը Փէրիի աչքերուն մէջ ձգելով :

— Երթամ գործերս վերջացնեմ , — ըսաւ Փէրին
և հեռացաւ :

Շահէն գրպանէն հանեց փոքրիկ գիրք մը ու
սկսաւ կարդալ . աչքերը արագ կը սահէին տողերու
վրայէն , բայց երբ մէկ երեսը վերջացուցած՝ կ'ուզէր
միւսը դարձնել , կը զգար որ ոչինչ չէ հասկցեր ,
և հոյն երեսը կը սկսէր հորէն երկրորդ ու երրորդ
անգամ . . . :

Ամբողջ բնութիւնը շքեղ պճնանք էր . վառ ու փայլուն արեւը կարծես կը մրցէր նորածիլ մութ կանաչին հետ , որ խոպոպներու ձեւով կը գդուէր նշենիներու կատարները :

Շահէնը ծառի մը տակ , կանաչ խոտերու մէջ՝ կանաչի վրայ պառկած կապոյտ երկինքը կը դիտէր . աչքերը կը փակէր պահ մը ու նորէն կը բացար . . .

Յոգնեցաւ կանաչի վրայ պառկելէն , երեսի վրայ դարձաւ , այնպէս որ դեմնի , հողի ու կանաչի քիչ մը խոնաւ ու ախորժելի հասը քիթին զարկաւ . աւելի մօտեցուց սունգերը հողին և ամբողջ շունչով ծծեց այդ թարմ բուրմունքը :

Զգաց , թէ այդ կանաչ , մատղաշ բոյսերու մէջ ինչպէ՞ս կեանքը կ'եռայ ու կը փրփրի . մայր բնութիւնը իր կուրծքէն հսկայ զարկերով ուժ ու զօրութիւն , կենդանութիւն կը մղէ խոտի ցօղուններէն դէպի վեր , դէպի լոյս ու ջերմութիւն . և բոպէ մը իր երակներուն մէջն ալ կարծես արիւնը սկսաւ աւելի արագ շրջան կատարել . . .

Այդ դիրքէն ալ յազնած , կողքին վրայ դարձաւ , արմուկը դեմնին զարկաւ , գլուխը ափին կռթնած սկսաւ խոտերու ցօղունները դիտել . ձախ ձեռքով շոյեց դեմնէն հաղիւ չորս մատնաչափ բարձր խիտ կանաչը . ճիշտ ինչպէ՞ս մէկը իր ծունկին վրայ նստած կատուի մարթը կը շոյէ , խոտի ցօղունները շարքով ետ ետ բացուեցան և սևագոյն հողը

չերտ շերտ երևայ կարճ ցօղուններու ճերմակ
բուններու տակէն . . . :

Ձեռքը մէկէն կեցաւ կանաչը շոյելէ . հայեաց-
քը աւելի լարեց Շահէնը և ուշադրութիւնով նա-
յեցաւ . հոն երկու փոքրիկ միջատներ ցօղունին
վրայ իրարու փակած էին . . . Շահէնը երկար
նայեցաւ ատոնց վրայ . արիւնի շրջանառութիւնը
կարծես պահ մը կասեցաւ , բայց մէկէն սիրտը ա-
ւելի արագ սկսաւ բարախել . արիւնը ուռեցաւ և
բակներուն մէջ . քունքի երակները մանաւանդ
շատ ամուր կը զարնէին , ափին մէջ կը զգար սը-
րտիումը . ապա թողուց խտտի վրայ նայելը . երեսի
վրայ ինկաւ նորէն , աչքերը դրաւ ծալլած թեւին
վրայ և արցունքը խեղդեց զինքը . . .

Բաւական ատեն այդ դիրքով կենալէ ետք ,
գլուխը վեր վերցուց , աջ ձեռքը կռուի շինած
ուժովն հարուածով կանաչին վրայ լիջեցուց . ու մը ր-
մնջեց ատամներու մէջէն .

— Ինչո՞ւ այսպէս , ինչո՞ւ այսպէ՛ս . . . ամբողջ
բնութիւնը կ'ապրի . . . կը ստեղծագործէ . . . :

Իր խուցը ալ շատ նեղ կուգար Շահէնին ,
սովորական աշխատութիւներն ու աղօթքները մա-
նաւանդ չափազանց ճանճրալի . . .

Իրիկունը երբ կը քնանար , գիշերը երբ կ'ար-

Թննար՝ անոր մասին կը մտածէր, առտուն արշա-
լոյսէն առաջ կ'ելլէր անկողինէն՝ անոր մասին մտա-
ծելով կը հազնէր հազուամաները, իսկ ցորե՞ կը . — օ՛ ,
այ չէր բաւականանար միայն մտածելով, առիթ կը
փնտռէր տեսնելու, նայուածքով գէթ անոր հետեւե-
լու, թող ըլլար հեռուէն, շատ հեռուէն . . . :
Առտուները երբ եկեղեցի կ'երթար, շատ անգամ կը
տեսնէր Փէրին եկեղեցիին դուռին ետեւ կեցած՝
կ'աղօթէ՞ր թէ ինչ, չէր կրնար հասկնալ, միայն սա-
չափ կը զգար, որ նոյնիսկ կիսախաւարին մէջ իր
նայուածքը կը փնտռէր ան ալ, իրեն կը նայէր ու
կը ժպտէր . . . :

Երբ սենեակի դուռի բանալին վրան կը մնար, —
և այդ շատ անգամ կը պատահէր, — վերադարձին
միշտ բան մը կը գտնէր Շահէնը Փէրիէն մնացած,
երբեմն քաղցրեղէններ, երբեմն թաշկինակ,
երբեմն միայն սենեակի սովորական կարգ ու սարքի
փոփոխութիւնը, և Շահէնը ամէն անգամ գլուխը
կը շարժէր, քիթին տակէն բան մը կը մուտար, կը
մօտենար դուռին կամ պատուհանին, կը նայէր բա-
կը, դուրս կուգար մինչև իսկ վանքին մեծ դուռ-
նէն, կը նայէր դուրս, անոնց վրանի շուրջը, — կ'ե-
րեւէ՞ր արդեօք, կրնա՞ր տեսնել . . . :

Այ այս ամէնը սովորական էին դարձեր, երբ
սենեակ մտնէր, առաջին դործը կ'ըլլար Փէրիէն յի-
շատակ մը գտնել, նոյն իսկ կը փնտռէր յա-
տուկ և երբ պատահէր որ չգտնէր, կը ախրէր . . . :

Այն օր Շահէնը սովորականէն շուտ վերադարձաւ սենեակ և հոն տեսաւ Փէրին , որ իր անկողինը կը յարդարէր :

Մայրական հոգածութեան ջերմութիւնը կարծես լեցուցեր էր Շահէնին խուցը . . . :

— Կը տեսնե՞ս , կնոջ ձեռքը որքան լաւ կը պատրաստէ անկողինը , — սովորական ժպիտով ու քնքուշ նայուածքով մը ըսաւ Փէրին ու վերմակին անկիւնները ուղղեց :

— Միայն անկողին . — հարցուց Շահէնը :

Փէրին անոր երեսը նայեցաւ ու ժպտեցաւ . . . , ապա բարձին երեսը սկսաւ յարդարել :

Շահէն անհուն փափաք մը զգաց Փէրին ձեռքերուն վրայ խնայու և համբուրելու , համբուրելու այդ մատերը , որ այնպէս քնքուշ կերպով կը շոյէին իր ամենօրեայ դուխ դրած տեղը . . . :

Անդիտակից մզումով քանի մը քայլ ըրաւ դէպի մահճակալը , բայց աներևոյթ դօրութիւն մը կարծես բռնեց զինքը . . . Փէրին նորէն անոր նայեցաւ . երբ վերջացուց , դուխը ծռելով ժպտեցաւ ու հարցուց .

— Եղա՞ւ . . . այս դիշեր աւելի հանդիստ կը քնանաս . . .

Շահէն չսպասեց ալ , թողուց ու դուրս ինկաւ խուցէն . . . :

Գրեթէ ամէն օր, արեւի մայրամուտէն առաջ, Փէրլին ընկերով, իսկ երբեմն ալ մինակ կղզիի ամայի անկիւններէն մէկը կը քաշուէր ու հոն կը լողար ծովին մէջ:

Շահէնը խմացեր էր սափկայ:

Երբ Փէրլին անդամ մը դանդաղ քայլերով, նշենիներու երկարած ստուերներու մէջէն կղզիին անընակ կողմերը կ'առաջանար, Շահէնը հեռուէն նկատեց ու ինքն ալ տարրեր ճանապարհով մը նոյն կողմը ուղղուեցաւ, աշխատելով աչքէ չփախցնել:

Շահէնը կը քալէր այնպիսի ճամբով մը և այնպիսի դիրքով, որ նկատելի չըլլար ոչ ոքի, նաև Փէրլին:

Նշենիներու տակէն կածան մը կ'ուղղուէր դէպի ծովափ, և յետոյ կը կորսուէր ժայռերու տակ, ուրկէ ծովը կը սկսէր:

Փէրլին այդ արահետէն ուղղուեցաւ դէպի ջուրը:

Շահէնը կեցաւ իր տեղը, ինչպէս որսի շուն մը դլուխը բարձրացուց զգոյշ ու հետեւեցաւ Փէրլին, որ նախ կորսուեցաւ ժայռերուն տակ, բայց շուտով երեցաւ նորէն:

Շահէնը ծանօթ էր կղզիին իւրաքանչիւր քարին, իւրաքանչիւր թուփին, այդ ժայռին տակ խորունկ էր. Փէրլին հոն չէր կրնար լողալ. ուստի աւազուտ ափին վրայ. . . մտածեց ան ու իսկոյն քիչ մըն ալ առաջացաւ և այնպիսի տեղ մը, ուր քա-

նի մը նշենիներու բուներ ու մեծ քարեր պատնէշ
կը կազմէին, թաքնուեցաւ :

Իր տեղը շատ յարմար էր :

Փէրին նախ ծովը դիտեց ջուրին մօտենալով,
ապա ետ դարձաւ, շուրջը նայեցաւ. արեւի ճառագայթները արդեւք կ'ըլլային արեւմտեան կողմը դիտելու. ձեռքերը ճակատին դրաւ, ու շաղրութիւնով նայեցաւ այն կողմն ալ, և երբ վստահ եղաւ թէ ոչ ոք չկայ, նախ դօտին քակեց և ապա սկսաւ հագուստները հանել . . . :

Շահէնը կծկուեցաւ որպէսզի աւելի լաւ պահու ըստի. որքան Փէրին կ'ուզէր որ մարդ չտեսնէ դինքը, նոյնքան և աւելի գուցէ Շահէնը կը զգուշանար նկատուելէ, ուստի այնպիսի դիրք մը ստացաւ, որ հնար եղածին չափ լաւ պաշտպանուած ըլլար մարդկային աչքերէ : Եւ երբ ալ բաւական ինքզինքը ապահով զգաց՝ նորէն Փէրիին վրայ նայեցաւ. ան արդէն մէկ տակ շապիկով էր . . . :

Շահէնը նայուածքը աւելի լարեց, վիզը երկարեց, գլուխը հնար եղածին չափ առաջ ձգեց . . .

Կատուն իր սրտին վրայ այնքան զգուշութիւնով ու երկիւղածութիւնով պահապան չի կենար անկիւն մը կծկուած՝ որքան Շահէնը այդ քարերուն մէջ . . . :

Ու երբ Փէրին նստած տեղէն անգամ մըն ալ շուրջը նայեցաւ ու քիչ մըն ալ ջուրին մօտենալով՝ մէկէն ձերմակ շապիկն ալ հանեց, ձգեց ու ջուրը

հետուեցաւ՝ Շահէնին աչքերը կարծես մութը պատեց . ի՞նչ էր եղաւ , ինքն ալ չիմացաւ , տեսողութեան ջիւղերը կտրուեցան , բաժնուեցան ուղեղէն . և հասիւ Փէրիին սպիտակ մարմինը նկարուեր էր անոր առջև , սիրտը արտիկ սկսաւ ու ամբողջ մարմնով դողալ . . . : Աջ ձեռքով շփեց արտեանունքը , կարծես շղարշէ ծածկոց մը քաշուեցաւ հոն : Իսկ երբ կրկին հայեցաւ դէպի ծով , կապտաւուն ջուրի մանրիկ ալիքներու մէջէն դլուխ մը միայն կ'երևէր , որուն առատ սև մազերը փռուեր էին ջուրին երեսին վրայ ու կը ծփային շարժող ալիքներու ծփանքին հետ միասին . . . :

Արևի վերջին ճառագայթները երկար ու խիտ գիծերու պէս կը ցոլանային ջուրին երեսը շոյելով . թեթև փրփուրի փոքրիկ պղպղակները կը փայլէին ձերմակ ու փայլուն , իսկ անոնց մէջէն Փէրիին ձերմակ կուրծքը երբեմն կը բարձրանար ջուրին մակերեսէն վեր . . . երկու ողկոյզները կը համբուրուէին ալիքներու փրփուրին հետ , կը խաղային անոնց կոհակներուն մէջ . . . :

Իսկ երբ Փէրին ուղիղ կեցաւ ջուրին մէջ , ցուցայաղբելով կապոյտ ֆօնին վրայ ձերմակ մարմինը իր նուրբ ու կոր գիծերով , Շահէնը ա՛լ չըկրցաւ հայիլ , աչքերը փակեց երկու ձեռքերով և մնաց այդպէս՝ քարերու վրայ ինկած՝ մինչև որ աստղերը փայլեցան երկնակամարին վրայ :



VI

Շահէնը երբ գիշերը արթնցաւ յանկարծ՝ առաջին մտածումը եղաւ իրիկուան հանդիպումը, և անմիջապէս անոր շարունակութիւնը կազմող երազը վերցիշեց :

Գլուխը դեռ բարձին վրայ կ'երեւակայէր .

Փէրին ծովին մէջն էր . սրն էր երազը, սրը իրականը . — ինքն ալ հեռու տեղէ մը ջուրը մըտաւ ու առաջացաւ . կը լսուար ձուկի մը պէս . դեռ կը դգար մարմնին թացութիւնը, թեւերը կը շարժէր, ինչպէս ձուկը իր լողակները . մօտեցաւ . ահա դեռ հոն, ջուրին մէջն է Փէրին . թեւերու քանի մը շարժում ևս, բայց կարծես կը դժուարանար . . . հասաւ վերջապէս ջուրի տակէն, առանց երեսը դուրս գալու . ակռայտ ընկեց այն կտր, ու դորկ ու ճերմակ ազդրերը, ջուրին մէջ, տղրուկի մը պէս՝ հոն փակած մնաց . . . ի՞նչ լաւ էր . . . բայց երանգ էր . . . ափսոս :

Փակեց աչքերը ամուր, յուսալով որ նոյն երազը կը շարունակուի, բայց զո՛ւր . . . փոխան ջուրի կոշտ վերմակն էր վրան . . . : Աչքերը բացաւ, թուեցաւ թէ՛ ցորեկ ըլլար, լուսնի լոյսը պատուհաններէն սննեակին մէջն էր զարկեր :

Ալ չկրցաւ քնանալ : Գիշերանոցով դուրս ե-

կաւ բակը : Լուսինի գունտար եկեղեցիի գմբէթին վրայ կը նստէր . այդ առատ, բայց սլաղ լոյսին տակ ամէն ինչ կը քնանար . մեղամաղձիկ խաղաղութիւնն ու անդորրութիւնը կը թագաւորէր չորս կողմ , միայն հեռուէն հազիւ կը լսուէր այիքներու փրափրասուքը . . . :

Բակը կարծես աւելի մեծցեր ու ընդարձակուեր էր . ցորեկ ատեն իւրաքանչիւր առարկան իր յատուկ գոյնն ունէր . հիմա բոլորը ներկուած էին միօրինակ , դեղնաւուն – ճերմակ գոյնով : Այդ ամբողջ ննջած շրջապատին մէջը , ինքը միայն բացառութիւն կը կազմէր իր բորբոքած ուղեղով . . . :

Թիկն առաւ սենեակի դուռի առջևի սիւնին , նայեցաւ այդ տեսարանին , բան մը չհասկցաւ , և գլուխը անզգալարար ծուկց դէպի քովի սենեակին դուռը ու երկա՛ր նայեցաւ հոն . . . :

Դուռը փակ էր . . .

Պահ մը այդպէս կենալէ ետք՝ երբ ընդհանուր լռութիւնը խանգարող չեղաւ , ոտքի մատի ծայրերուն վրայ կամայ ու դգոյշ քայլերով մօտեցաւ դուռին :

Կեցաւ , շուրջը դիտեց . խո՛ր լռութիւն . . .

Ականջը մօտիկցուց դուռին . հազիւ կը լսուէր մարդկային շնչառութիւն . . . :

Միտք մը սկսաւ տանջել դինքը . մինա՞կ էր արդեօք՞ . . ուշադրութիւնը սրբան լարեց , շնչառութենէն չկրցաւ բան մը հասկնալ :

— Եթէ դիտնամ որ մինակ է. — կը մտածէր ան.
— կը դարնեմ դուռը, ներս կը մանեմ, լուսնի լոյս-
սին տակ, անոր վիզը կը փաթթուիմ, թող լուսինն
ալ տեսնէ: — Նայեցաւ դէպի լուսինը և ատամները
սեղմելով շնչաց.

— Կ'ըսեմ, կ'ըսեմ... ամէն բան կ'ըսեմ... :

Ձանդակները կը դողանջէին առտուն կանուխ.
Ժամերգութեան ատեն էր:

Շահէնը այդ օր շքնաց եկեղեցի, ծովափը կե-
ցած՝ արևի ծագումը կը դիտէր: Ամբողջ գիշերը
բոցավառ հնոցի մը պէս վառուող երևակայութիւնը
հիմա քիչ մը հանդստանալ սկսաւ ծովէն փչող ար-
շալոյսի գեփուէն:

Գեղեցիկ էր բնութիւնը, արևի գունաւոր հեւ-
քոտ մղումով մը դուրս կը ձգտէր արևելեան լեռ-
ներու կատարներէն, ամբողջ կղզին կը վառէր արևի
առաջին ճառագայթներուն տակ, գիշերուայ ցօղը
կը գոլորչիանար, որպէս ծուխ անուշահոտ կնդրու-
կի դէպի վեր, երկինք կը բարձրանար, թռչունները
այս ու այն ծառի վրայէն կամ շէնքերու պատերէն
ու քարերու տակէն սկսան թռչկոտիլ ու ճռուողիլ:
Շահէնի աչքին այսօր ամէն ինչ փոխուեր էր, մինչև
այդ օրը կո՞յր է եղեր, և ինքն ալ որպէս այդ հսկայ

բնութեան մէկ փոքրիկ մասնիկ կ'ուզէր ճայնակից
լլայ բնութեան դարձօնքին . . . :

Ղօղանչող զանգակները եկեղեցի կը հրաւի-
րէին . . .

— Յիմարներ , — արտասանեց Շահէնը , ջուրի
մակերեսին վրայ սահող ճառագայթները դիտելով .

— Յիմարներ , — կրկնեց քիչ մը լուկէ յետոյ
— հոս ամբողջ բնութիւնն է որ կ'աատուածանայ
կեանքի ու կենդանութեան մէջ , իսկ անոնք , մենք
բոլորս կ'երթանք անշուէն , անխօս ու անկենդան քա-
րէ պատերու մէջ կը փառարանենք դուցէ հոյնքան
և աւելի անշուէն ու անկեղան . . . — վերջին բառերը
խառնուեցան ծովէն եկող ալիքներու ֆշշոցին , ու
տարածուեցան դէպի զանգակատան ղօղանջները . . . :

— Յիմարներ . . . — կրկնեց Շահէնը երբորդ ան-
գամ և խոնաւ աւազին վրայէն քալեց դէպի հշե-
նիներու երկար ստուերները :

Փէրիի սիրան ալ կ'ալեկոծէր ծովի մշտայոյզ
ալիքներու պէս . բայց այլազան զգացումները գի-
րար կը խաչաձևէին տարբեր ուղղութիւններով և
ամէն անգամ , երբ անիկա կը փորձէր այդ տար-
բեր սէրերու քաօսին մէջէն դուրս գալ , իր կա-
հացի ուղեղը չէր զօրեր ինքզինքը հաւասարա-

կըշուելու . — երկար մաածելէն զլուխը կը շմէր կարծես , և բոլոր , բոլոր խորհուրդներէն կը մնար մէկը միայն . — որ ինքը կը սիրէր . . . :

Եւ առիթ ներկայացուց այնպէս մը . — օ . կինե՛ր , կինե՛ր , ո՞ր կինն է աշխարհիս վրայ , որ եթէ ցանկայ իր սրտի սիրականին հետ առանձնութեան մէջ արբենալ , չի կրնար պատեն առիթ գանել , նոյն իսկ եթէ երկաթէ պարխապներով ու դուռներով փակուած ըլլայ . . . : Եւ Փէրին առիթը ներկայացուց այնպէս մը , որ ինքը մինակ մընայ իր սենեակին մէջ :

Չկայ աւելի խորհրդաւոր զգուշութիւն , քան սիրոյ զգուշութիւնը . չկայ աւելի հաստատակամ , հետևողական հետապնդում , քան սիրած էակին հետապնդումը . . . :

Փէրին իւրաքանչիւր քայլը , իւրաքանչիւր շարժումը չէր կրնար ճողոպրիլ Շահէնի ուշադրութենէն : Անոր քղանցքներուն շարժումը , անոր ոտքերու թեթև քսուրուտութիւնը աւագի ու սալայատակի քարերուն վրայ , հեռուէն , շատ հեռուէն իսկ բաւական էին յուզումներու փոթորիկներ ծնելու Շահէնի պատանի սրտին մէջ . . . :

Երեկոյեան ս՛ւշ ատեն , երբ Շահէնը իր խրցիկին մէջ մինակ նստած՝ ճրագի լոյսին կը նայէր ու վառուող բոցին մէջ Փէրիի պատկերը կը տեսնէր , զգաց թէ ինչպէս քայլերը կը մօտենային , չըջազգեստի անս՛ւշ խշշոցը կը լսուէր օդին մէջ . . .

քայլերը կեցան դուռին առջև, դուռը բացուեցաւ,
— մէկ էր արդեօք, մինա՞կ, մէկ, հը՞, — սկսաւ
մտածել ինքնիրեն . . . :

Այլ չկրցաւ տեղը նստիլ, դուրս ելաւ, և երբ
երկա՛ր ուշադրութենէ յետոյ ոչ մէկ ձայն լսեց,
քայլերը չհնազանդելով իր կամքին դէպի Փէրիի
դուռը շարժեցան :

Դուռին առջև կեցեր էր, մատը կը բարձրա-
ցընէր որ դուռը զարնէր, ետ կը քաշէր . . . : Երկու
ներհակ ուժեր կը սլայքարէին անոր ներսի դին :
Զգուշութեան համար արդեօք, յաճախ ետ կը նս-
յէր . — դատարկութիւնն ըսկին մէջ, վեր կը նայէր . —
աստղազարդ երկինքը իր ամբողջ հսկայութիւնով կը
լայննար իր աչքերուն առջև, անհունութեան դօ-
տին կիրքերու անսահման ուժգնութիւնով հսկայ
պիքներ կը մրրկէր իր հոգիին մէջ . . . :

Եւ այնտեղէն, աստղերուն ծոցէն ձայն մը,
ծերունի, պատկառելի ձայն մը, մանկութեան
օրերու պաշտամունքի առարկայ ձայնը կը
կանչէր .

— Մե՛կ դք է, մե՛կ դք է . . .

Շահէն մատը դուռին վրայ դրած՝ գլուխը
դէպի ետ՝ կը նայէր անթիւ, անհամար աստղե-
րուն . կը սպասէր որ գէթ պահ մը լուէր այդ ձայնը,
որ մինչև ոսկորներուն ծուծը կը սարսուացնէր ան-
հկարագրելի դողով մը . . . :

— Մե՛կ դք է . . . մե՛կ դք . . . — կարծես աւելի

ուժգին շեշտով հնչեց ձայնը , կրք մատը բարձրացաւ :
Ներսէն զգացուեցաւ մարդկային շունչ՝ հազուսա-
ներու խշշոցին հետ .

Մատը իջաւ .

— Դը՛ք . . .

Տախտակի չոր , անտախտ ձայնին հետ լուեց
հասե միւս ձայնը :

Շահէն շունչը լռեց , մատը ատամներով խա-
ծաւ . . .

Թեթե քայլեր սենեակին մէջ . . .

Մանրիկ քայլերուն կամայ ոտնաձայնը կը
լսուէր դուռին առջև :

— Ա՛ն է , երթամ , թէ չերթամ— կը մտածէր
Շահէնը մութ սենեակին մէջ իր անկողինի վրայ սլառ-
կած .— երթամ ի՞նչ ըսեմ , ըսեմ որ կը սիրե՞մ ,
ինչպէ՞ս ըսեմ , ա՛ն ինչ կ'ըսէ . . չի՞ խնդար վրաս ,
չի՞ բարկանար , յանդիմաներ . . . երթամ , ձեռքէն
բռնեմ , սենեակս բերեմ . . . յետո՞յ . . . ա՛ն ինչ կը մը-
տածէ իմ մասիս , ինչո՞ւ դուրս ելաւ , իմացա՞ւ թէ
ես էի իր դուռին առջև . . . — Եւ Շահէն սրտատրոփ՝
ականջը դուրսի քայլերուն դրած՝ սկսաւ յիշել անց-
եալը , մանկութեան օրերը . . . , իրենց առաջին հան-
դիպումը . . . անոնց տունը . . . Փէրիին իր հետ վար-
մունքը , անոր հոգածութիւնը , անոր դուրգու-

բանքը իր վրայ . . . ինչ էր այդ ամէնը . . . ինչպէ՞ս
բացատրել . . .

Յիշողութեան շարքի թեր խղեց նորէն քայ-
լերու ձայնը . մօտեցաւ իր դուռին . . . կեցաւ . . . հը՞ ,
հե՞րս . . . : Հեռացաւ նորէն . . . կը քաշուի . . .
եթէ գալու ըլլայ , ինչ պիտի ըսէ . . . պիտի ըսէ , ինչ
որ կը մտածէ . . .

Քայլերը նորէն մօտիկցան . . .

— Դուռը բաց է . . . — Գլուխը քիչ մը վեր-
ցուց բարձին վրայէն ու խաւարին մէջ դէպի դու-
ռը նայեցաւ : — Կեցաւ նորէն դուռին առջև ,
խորհրդաւոր լռութեան մէջ այդ զգոյշ քայլերը
սարսուեցնող բան մը ունէին . . .

Դուռը կամայ մը ճանչեց . . .

Շահէր իր տեղ անշարժ կեցաւ , բայց սիրտը
բարախել սկսաւ . . . :

Սենեակի խաւարին մէջ ճերմակ հագուստով
ուրուական մը կ'առաջանար պատի տակէն նոյն ըզ-
գոյշ ու դանդաղ քալուածքով . . .

Պահ մը կասկածեցաւ Շահէն , գրեթէ վախի
պէս բան մըն ալ զգաց , — ո՞վ է , եթէ ան չէ . . .
եթէ Փէրին չէ . . . բայց անհնար է որ ուրիշ մէկը
ըլլայ . . . յուսադրեց ինքզինքը :

Ճերմակ ուրուականը քանի մը անգամ դար-
ձաւ սենեակին մէջ , ապա մօտեցաւ պատուհանին ,
ուր աղօտ կերպով կիսախաւարի մէջ նկարուեցաւ
Փէրիին դէմքը . . .

Յետոյ առաջացաւ .— ձեռքերը իրարու կցեց
ու ծունկի եկաւ իր առջև . . .

Շահէն սկսաւ աւելի դողալ , իրեն այնպէս կը
թուէր թէ այդ ամէնը սուտ էր , երևոյթ կամ ե-
րազ . . . բայց ո՛չ , կը տեսնէր իր աչքերով , Փէրին
իւր առջևն էր , այժմ , գիշերը , մինակ , իր խուցին
մէջ . . . նորէն հաւատալը չէր դար , այժմ ի՞նչ ընէր ,
վե՞ր թռչէր , փաթաթուէր վի՞զը , ըսէ՞ր ինչ որ կը
մտածէր . . .

Փէրին գլուխը կամաց մը իր վրայ ծռեցաւ . .
զգաց անոր տաք շունչը , ապա առատ մազերը
թափեցան իր երեսին վրայ . . . հոլանի թևերը փաթ-
տուեցան իր գլուխին շուրջը ու համբոյրներու տա-
րափին տակ կորաւ իր ամբողջ դէմքը . . .

Ներքին ալեկոծումը սարսափելի էր . . .

— Փէրի՛ , Փէրի՛ — մրմնջեց Շահէնը համբոյր-
ներու տակ , ինքն ալ թևերը բարձրացուց ու գլը-
կել ուզեց :

Յանկարծ՝ աղատուեցաւ գլուխը , դադրեցան
համբոյրները , քաշուեցան մազերը , ձերմակ Փէրին
դուրս թռաւ սենեակէն . . .

Շահէն լսեց քովի սենեակին դուռի ձայնը . . .



VII

Շահէն այնպէս հաւատացած էր, թէ արդէն
ամէն ինչ վերջացած է. յաջորդ գիշերն ալ կրկին
հանդիպում պիտի ունենար Փէրիին հետ . . . :

Ուշադրութիւնը լարած երկա՛ր սպասեց իրի-
կունք իր սենեակը, որ նորէն պիտի գայ . . . նորէն
անոր գիրկին մէջ . . .

Իր ճրագն ալ թէև վառեց, բայց անմիջա-
պէս մարեց. սրտուհանին առջև նստած դուրսի
խաւարին կը նայէր ու կ'երեւակայէր. ամէն մէկ
չարժում, ամէն մէկ քայլի ձայնը կը ցնցէր զինքը
և կարծել կուտար թէ անա ան է . . . : Բայց
հետզհետէ երթևեկութիւնը դադրեցաւ ամբողջ
վանքին մէջ, խուցերուն ճրագներն ալ մարե-
ցան և լուսթիւնն ու խաւարը իրենց սև գիր-
կին մէջ ամուր սեղմեցին ոչ այնքան ամբողջ վան-
քը, կղզին, որքան Շահէնի յուզումը երեւակայու-
թիւնը . . . : Ալ կը յուսահատէր . . . չպիտի գար . . . :

— Գուցէ դադատուկ սենեակն է մտեր, և ինքը
չէ խմացեր, մտածեց ու դուրս եկաւ : Սովորակա-
նին պէս կամայ մը մտեցաւ դուռին, ականջ դը-
րաւ բանալիին ծակին, թէ չկա՛ր շնչառութիւն.
սպասեց . . . մեռելային լուսթիւն : Մինչև իսկ փոր-
ձեց, դուռին դարկաւ, նորէն լուսթիւն. ոչ մէկ

պատասխան . . . գոնէ բայ ըլլար դուռը , միայն
բացուէր , ինքը ներս մտնէր , միայն այդքան ,
թող ըլլար դատարկ սենեակ . . . անոր անկողինը . .

Ետ դարձաւ նորէն . ուղեց քնանալ ,
բայց զճէր էր . աչքերը չէին փակուիր ,
քունը հեռու կը փախչէր . այս քանի՞երորդ գի-
շերն էր որ չէր կրնար քնանալ . . . Միշտ նոյն պատ-
կերը , միշտ Փէրին իր երկար մազերով . . . յաճախ
իր մերկ մարմինով ջուրի ճերմակ փրփուրներուն
մէջ կը լողայ , իսկ ինքը կարասի մը պէս թևերը
ջուրին երեսը տարածած՝ անոր կը մօտենայ և իր
կարմիր կտուցը անոր շրթունքներուն վրայ կը դը-
նէ , ան կը գրկէ իր երկար սարանոցը ու կուրծ-
քին կը սեղմէ . . . իր թևերը կը թափահարին ջուրի
երեսին վրայ և անոր մարմինը , անոր ծունկերն ու
կողերը կը շոյեն . . .

— Գուցէ դեռ դուրսն է , դեռ չէ քնացեր ,
կը պտտի վրանին շուրջը կամ ծովափը :

Գուրս ելաւ և ուղղուեցաւ դէպի վրանը :

Մտիկ ըրաւ ու դիտեց . ծովի ալիքներու մեղմ
մրմունջը կը լսուէր , ո՛չ մէկ ստուեր մարդկային :
Ճերմակ վրանը գետինին վրայ կպած՝ որպէս հսկայ
կենդանի մը կը քնանար հանգիստ . . . :

— Գուցէ տեղ մը նստեր է , ան ալ իմ մասին
կը մտածէ , ինձի կը սպասէ , ինքզինքը յուսադրեց
Շահէն և քակեց վրանին շուրջը . աչքերը լարած կը
դիտէր ամէն մէկ քարի սակ , իւրաքանչիւր թու-

փը , կը նայէր աւազին վրայ , ծառերուն մէջ , իսկ
երբ խաւարէն հեռուները չէր կրնար նկատել , քա-
նի մը քայլ կ'առաջանար , աւելի ստուերոտ տեղերը
ձեռքերը տարածած՝ օդին մէջ կը շօշափէր . . .
բայց փոխանակ Փէրիին՝ կա՛մ ծառի մը բունը կը
բունէր , կա՛մ երկարած սառ մը . . . : Երկա՛ր փըն-
արուեց , միևնոյն տեղէն քանի մը անգամ անցաւ ,
զո՛ւր աշխատանք . . . :

— Կրնայ ըլլալ որ դեռ կը սպասէ , մինչև բու-
լորը քնանան , յետոյ դուրս կուգայ , — Ու
մօտեցաւ վրանին , դուռին ճիշտ դէմը , քարի
մը վրայ նստաւ . աչքերը միշտ նոյն տեղը
յառած՝ սպասելով որ ահա հիմա դուրս կ'ելլէ . ան-
պատճառ պիտի գայ . ան գիտէ , պէտք է գիտ-
նայ , որ ես իրե՛ն կը սպասեմ . . . :

Օդը ցուրտ էր ու խոնաւ . Շահէնը սարսուռ
մը զգաց իր ոսկորներուն մէջ , բայց տեղէն չշար-
ժեցաւ : Երկինք նայեցաւ , աստղերը կը փայլէին
հոն հանդա՛րտ . . . և տարօրինա՛կ , որքան աւելի կը
նայէր , այնքան կը թուէր թէ երկնակամարը կ'ըն-
դարձակուէր . . . աստղերը սովորականէն աւելի շատ
կ'երևէին , աչքերը աստղերուն էր . միտքը Փէրիին
վրայ . . . բայց ինչո՞ւ այսօր այդպէս էին . . . լեզու-
ունէին ու կը խօսէին . ձայն չկար , անհուն լուռ-
թիւն և աստղային լոյս . . . բայց բաներ մը կը փրս-
փրսային իրարու . . . ծովի ալիքներուն . . . այնքան
նմանութիւն կար այդ ալիքներուն մեզմ շփոցին և

այդ աստղերուն փափառքին միջև . հեռո՛ւ էին իրարմէ , շա՛տ հեռու , բայց և այնպէս կը հասկնային իրար . և զարմանալին ան էր , որ ինքը , Շահէն ալ սկսաւ հասկնալ անոնց լեզուն . լուսթեան մէջ իր սիրտն ալ սկսաւ մխալ , անորոշ շշուկները իր սիրտի մէջն ալ սկսան անձայն թրթռալ . կ'ըմբռնէր , կը հասկնար այդ ամէնը . . . և որքա՛ն քաղցր էին այդ խօսքերը , . . . լո՛ւս ու խորհրդաւոր . և այդ ամբողջը միայն և միայն Փէրիի մասին էր . . .

Ահա՛ այն մէկ աստղը ինչպէ՛ս կը ժպտի . . . բայց անոր ժպտին մէջ թախի՛ծ կայ . . . այն միւսը , անոր քովինը , ամբողջ խուճրը տխուր են ու կուլան . . . կուլան . . . ինքը կը լսէ անոնց ձայնը , կ'ըզգայ , կը տեսնէ նոյնիակ անոնց արտասուքը , որ կը թափի հեղեղի պէս , վար կուզայ և արիքները կը խշշա՛ն . . . ճերմակ փրփուրը կը թաւալի սւաղին վրայ ու կը համբուրէ աւազին մանրիկ հատիկները . իսկ ինքը այդ սառն արցունքներուն մէջ կը մտի , կը դողա՛յ . . .

Ծովէն փչող սառ քամին շոյեց Շահէնի երեսը , կարծես քունէն յանկարծ արթնցաւ ու ոտքի ելաւ քարի վրայէն : Ոսկորները սառեր էին , ոտքերը դժուար կը շարժէր . . . :

Մօտեցաւ վրանին , արթնո՛ւն էին թէ քընտցած . ձայն չկար : Ծռեցաւ , վրանի գետինին վրայ ինկած ծոպերը վերցուց զգուշութիւնով ու ներս նայեցաւ . . . ոչի՛նչ չէր երևեր . . . , կը շարունակէր

հայիլ, սաքերն ու ամբողջ մարմինը կը դողային
ցուրտէն ու յուզումէն. բայց ան կը դիտէր վրա-
նէն ներս, կուզէր մտնել հոն... թաքնուիլ մէկ
անկիւնը... միայն լսէր անոր շնչառութիւնը...

Յուրոր սաստիկ էր, ա՛լ դիմանալը դժուար.
Շահէնը սկսաւ ձեռքերը իրարու շփել արագ արագ
ու երթեկելի որ քիչ մը կարենայ տաքնալ. ձեռքի
մատին ծայրերը, նաև սաքերն ու ծունկերը ամէնէն
շատ կը մսէին. երկու ափը միասին բերանին մօտե-
ցուց ու սկսաւ շունչով տաքցնել... կը շնչէր ա-
րագ արագ, երբեմն կը կենար վրանին քով ու
կ'ուզէր լսել... :

Գիշերը տնցնելու մօտ էր. եկեղեցիին դան-
դակները հնչեցին. արշալոյսի ժամերգութիւնը կը
սկսէր :

Շահէն կը սպասէր դեռ : Չէ՞ որ ամէն առա-
ւօտ ժամ կ'երթար, այսօր միայն ինչո՞ւ պիտի բա-
ցառութիւն կազմէր :

Եւ Շահէն չէր սխալեր. վրանին տակ լոյսը
վառուեցաւ. ծառի մը բունին կպած՝ ճիշտ ճանա-
պարհին վրայ կեցաւ. աչքերը վրանի դուռին՝ մը-
տածելով թէ ինչպէ՞ս սկսի, ի՞նչ պիտի խօ-
սի... :

Եւ երբ կանայի ստուեր մը վրանէն դուրս ել-
լելով շարժուեցաւ դէպի ժամ, Շահէնի ծունկերը
սկսան աւելի դողալ . պահ մը մտածեց ձայն չհանել ,
թող անցնի , միայն ինքն ալ կը հետեւի անոր , բայց
միևնոյն ատեն՝ դեռ ստուերը իրեն չէր հասեր , երբ
աներևոյթ դորուժիւնով մը առաջ շարժեցաւ . Փէրին
մէկէն կեցաւ , կ'ուզէր ետ փախչիլ , գուցէ և ճշալ ,
երբ Շահէնը թեւերը բացած՝ առջևը վազեց հազիւ
արտասանելով .

— Փէրի . . .

Բռնեց անոր ձեռքը , պահ մը լուռ իրարու ե-
րևար նայեցան մութին մէջ . ապա Շահէն քակեց
դէպի ծովափը , Փէրին առանց ձայն հանելու հետե-
ւեցաւ անոր . . . :

— Շահէն , դուն այս ատեն ի՞նչ դործ ունիս
այս տեղերը . — ըսաւ Փէրին , երբ կեցան ճիշտ ա-
լիքներուն քով :

— Ես ամբողջ գիշերը հոս էի :

— Ինչո՞ւ :

— Քեզի համար . . .

— Խեղճ տղայ , խեղճ , դուն խեղճ ես , այս
ցուրտին , այս խոնաւ օդին . . .

— Ես կը հաւատայի որ դուն դուրս կուգայիր . .

— Տե՛ս , տե՛ս ինչպէս ալ կը դողայ , երթանք ,
երթանք , ինչո՞ւ եկանք հոս , դուն սառե՛ր ես . —
ու աւելի ամուր սեղմեց Շահէնի երկու ձեռքերը
իր ափին մէջ . . . :

Շահէն աւելի սկսաւ դողալ :

Ծովի ալիքները արշալոյսի քամիէն մղուած՝ սկսան աւելի շառաչալից ափին դարնուիլ, այնպէս որ ալիքներէն մէկին ցայտող փրփուրները եկան ու թրջեցին անոնց հագուստները : Երկուքն ալ ետ ետ քաշուեցան, և ժայռի մը առջև կեցան :

Շահէնի դողը հետզհետէ աւելի կը սաստկանար, կը ցնցուէր ամբողջ մարմինով. շնչառութիւնն իսկ կանոնաւոր չէր, ատամները կը կափկափէին : Փէրին ձեռքը անոր ճակատին դրաւ ու ըսաւ .

— Երթանք, երթանք, ինչո՞ւ բերիք ինձի հոս . . .

Շահէն ա՛լ աւելի սկսաւ դողալ. Փէրիի ձեռքը ամուր սեղմեց իր ճակատին վրայ :

— Երթանք. — կրկնեց Փէրին, — խեղճ տղայ, դուն ամբողջ դիշերը չե՞ս քնացեր . . .

— Քեզի՛ կ'ըսպասէի. — կամաց մը շնչաց Շահէնը :

Փէրին ուզեց առաջ շարժիլ, Շահէնը թող չտուաւ :

— Փէրի՛ . . . Փէրի՛ . . . — դողդոջ ձայնով ըսաւ Շահէնը. — դուն ինձի կը հասկնաս . . . դուն ինձի կը հասկնաս : . . . մի՛ . . . մի՛ տանջեր . . .

— Ուրկէ՞ խմացած պիտի ըլլայ. — մտածեց Փէրին. — խմացե՞ր է արդեօք, վարդապետ վանահայրն է ըսեր. ի՞նչ ընէ հիմա ինքը, խոստովանի՞, պատ-

մէ՞ ամբողջ անցեալը . . . : բայց ինչպէ՞ս պատմե՛ ,
ուրանա՞յ , իսկ եթէ ան դիտե՞ . . .

— Դուն չես քնացեր ամբողջ գիշերը , խեղճ
տղայ . . . — ուղեց խօսքը փոխել Փէրին :

— Քեզի համար , Փէրի . . . քեզի համար ես
ամբողջ գիշերը երկինքի աստղերն եմ համբեր , ծու-
վի ալիքներու ձայնը մտիկ եմ ըրեր , խաւարի ու
լուսթեան մէջ քեզի համար եմ . . . :

Փէրին լուռ անոր ձեռքերը կը սեղմէր իր
ափին մէջ , նախկին թաքուն մտածումները փայլե-
ցան աւելի պայծառ , զիր ու ցան միտքերն ու պատ-
կերները յանկարծ մէկ հաւաքուեցան և որոշ ամ-
բողջութիւն մը կազմեցին . . .

— Փէրի . . . դուն ինձի կը հասկնաս . . .

Փէրին կը թուէր թէ կը հասկնար անոր միտ-
քը . . . բայց ինչպէ՞ս . . . կը զառանցէ՞ր արդեօք ,
ատոր հետ մէկտեղ ներքին բան մըն ալ կը զգար . . .

— Շահէ՛ն , ինչ է պատահեր քեզի այսօր . . .

— Մի . . . մի տանջեր դիւ . . . ես միայն ,
միայն քեզմով է . . . տարիներ շարունակ իմ սիրտի
խորանին առջև միայնով աստուածային պատկերը
քու այս դէմքն էր . . .

Հեղեղներ կարծես , որպէս անեղագոյ ջրվէժի
չառաչալից ալիքներ , կը թաւալէին Փէրիի ուղեղէն
դէպի սիրտը . ինքը մա՛յր էր . . . թէև կը զգար եր-
բեմն թաքո՛ւն . . . աղօտ կերպով . . . բայց երբէ՛ք
չէր սպասեր . . .

— Քու սէրդ . . . Փէրի , քու սէրդ . — քիչ մը լուելէ յետոյ ատամներու մէջէն մեծ դժուարութիւնով արտասանեց Շահէնը — իմ մէջ չկայ ուրիշ բան , ես քեզ կը սիրէի . . . կը . . . սի . . . — ալ չկրցաւ շարունակել , գլուխը անոր ուսերուն վրայ դրաւ ու հեկեկալ սկսաւ . . .

Յնցուեցաւ Փէրին , արիւնը կարծես սառեցաւ երակներուն մէջ և ոչ մէկ բառ չկրցաւ ըսել .

— Ըս' . . . ըսէ' . . . դուն ա՛լ , դի՛ս . . . — հարցուց Շահէն նոյն դիրքով .

Փէրին հաւաքեց ուժերը . . .

— Հանգստացի՛ր , հանգստացի՛ր խե՛նթ տղայ , ես քեզի սիրեր եմ մայրական սէրով , սիրեր եմ ինչպէս մայրը իր որդին կը սիրէ . . .

— Սո՛ւտ է , — գլուխը բարձրացուց Շահէն , — սո՛ւտ է , դուն կը խաբես զիս , դուն կը խաբես ինքզինքդ , մայր մը իր որդին այնպէս չի սիրեր , չի կրնար սիրել . . . դուն կը խաբես ինքզինքդ . մայր մը իր որդին այնպէս չի համբուրեր , ինչպէս դուն զիս կը համբուրէիր , մայր մը իր որդին աչքերուն մէջ այնպէս չի նայիր , մինչև հոգիի խորերը , ինչպէս դուն կը նայէիր . . . և ոչ որդին իր մօ՛րը , ինչպէս ես քեզի . . .

Շահէն սկսաւ աւելի ցնցուիլ , շրթունքը մօտեցուց Փէրիի շրթունքին . . . և ջղազրգիս կատաղութիւնով սկսաւ շօշափել կուրծքը , հազիւ շնչալով ատամներու մէջէն .

— Աստ՛նք , աստնք իմ տղայութեան ասուն
բայ էին իմ առջև , իսկ հիմա ինչո՞ւ են փակ , ին-
չո՞ւ են փակ . . . :

Փէրին ուղեց հեռացնել ձեռքերը , բայց Շա-
հէնը աւելի խանդով սկսաւ փարիլ . . .

— Մե՛ղք է , մե՛ղք , խե՛ղճ տղայ .

— Սո՛ւտ է , մեղք չկա՛յ . . .

— Սո՛ւտ . . . — աջ ձեռքի ցուցամատը շըր-
թունքներուն վրայ դրաւ Փէրին . սո՛ւտ , մե՛նղք
է կ'ըսեմ . . .

— Մեղք չկա՛յ , կ'ըսեմ քեզի , ապիկա ես էի ,
որ յիմարարար կը քարողէի երբեմն , մեղք չկա՛յ . . .
բոլորը կը սիրեն , ամէ՛նքը , ամբողջ բնութիւնը
ինքը սէ՛ր է . . . ամէ՛նքը իրարու կը ձգտին . . .
իրարու մէջ կը ձուլուին . . . գետնի խտու-
րուն , ծառի ծաղիկներո՛ւն . . . ցեխի որդերուն
հայէ . . . հայէ՛ , երկինքի ատողերո՛ւն հայէ ,
անոնք այս գիշեր ինծի ըսին , որ իրենք ալ կը
սիրեն . . . մեղք չկա՛յ . . .

Փէրին սիրտն ալ տակն ու վրայ կ'ըլլար . ան
գեռ ես չէր որոշեր իր ընելիքն ու ըսելիքը . մայ-
րական սէրը խառնուել էր տարիներու ընթացքին
մէջ ուրիշ տեսակի սէրի մը հետ , և թէև ինքը
կ'ուզէր որ միմիայն մայրական սէրը մնար ու յաղ-
թական ելլէր , բայց ըսպէ՛ մը միւսը զօրաւոր ե-
ղաւ . իր առաջին սիրականը հորէն սխալկերացաւ իր
առջև , երխտասարդ օրերու արիւնը հորէն վաղեց

իր երակներուն մէջ . երկու ձեռքով բռնեց Շահէնին գլուխը, աչքերուն մէջ նայեցաւ, համբուրեց, կուրծքին սեղմեց, նորէն համբուրեց ու չկրնալով զսպել ինքզինքը, հեկեկալ սկսաւ . . .

Շահէնը գրեթէ մարած՝ անոր հեացող լանջքին վրայ էր ինկեր, իսկ Փէրին կը շարունակէր բորբոքած վամբիրի մը պէս անոր շրթունքներէն կախուիլ, կուրծքին սեղմել ու արտասանել .

— Հոգի՛ս . . . հոգի՛ս . . .

— Ա՛ն՝ . . . դուն ա՛լ կուլաս . . . դուն ա՛լ . . . րսաւ Շահէնը ու գրկեց, — կը սիրե՛ս, դո՛ւն ալ . . .

— Այո՛, հոգի՛ս, կը սիրե՛մ . . . կը սիրե՛մ . . . և աւելցուց անմիջապէս — մայրակա՛ն սէրով . . . — և վերջին խօսքէն յետոյ՝ դադրեցուց կրքոտ գրգռւանքները :

Շահէնը աւելի մրմռացող ցաւով մը սկսաւ գալարիլ :

— Մի՛, մի տանջուի՛ր դուր, խեղճ տղայ, հաւատա՛ խօսքիս, ես քեզ կը սիրեմ մայրակա՛ն սէրով . . .

— Սո՛ւտ է . . . սո՛ւտ է . . . — կը մրմնջէր Շահէնը :

— Վկա՛յ է Աստուած, վկայ է երկինք, վկայ այս վանքը, վկայ քու կանանչ արեւը, ո՛րդիս, Շահէնս, ես քու մայրդ եմ . . .

Եւ վերջին խօսքին վրայ ձեռքերով ծածկեց երեսը ու այնպիսի աղիողորմ լաց մը սկսաւ, որ

Շահէնին թուեցաւ թէ պիւքները դադրեցան շառա-
չելէ, երկինքի աստղերու լոյսը խաւարեցաւ, մէկ
անհո՛ւն ամայութիւն ու դատարկութիւն գոյա-
ցաւ, որու մէջ կը հնչէր միայն և միմիայն Փէրիի
հեկեկանքը. անոր վերջին խօսքը արձագանք կու-
տար այդ դատարկութեան մէջ.

— Ես քու մայրդ եմ . . .

Շահէնը երկիւղով հարցուց .

— Հարազատ, հարազատ մայր . . . — և չէր
ուզեր սրտասխան ստանալ, երբ Փէրին մինչև ա-
ղիքները մրմռացնող հառաչով մը ըսաւ .

— Քու հարազատ մայրը . . . զաւակս, զա-
ւակս . . . հա . . . հա . . . հա . . . — ու գրկեց Շահէնի
գլուխը :

— Բայց ես ո՛րք եմ . . .

— Սո՛ւտ է, սո՛ւտ . . . դուն իմ զաւակս ես . . .
եւ քու մայրդ եմ . . . իսկական . . . հարազատ . . .
.

Ու այլ չկրնալով խօսիլ կարծես մարեցաւ :

Շահէնը սարսափահար փախաւ կղզիին անբը-
նակ կողմերը . . . :



VIII

Մէկ օր յետոյ Վանահայրը Փէրին իր սենեակը կանչեց ու ըսաւ .

— Առաջին անգամ դուն իմ քով եկար քու զաւկիդ համար, այսօր ալ ես քեզի կանչեցի նորէն քու զաւկիդ համար :

Փէրին ախուր էր : Վանահայրը քիչ մը լուելէ ետք աւելցուց .

— Երևի լսած ես արդէն . Շահէնը ծանր հիւանդ է . . .

Փէրին հոգոյ մը հանեց . Վանահայրը շարունակեց .

— Պէտք ունի լա՛ւ խնամքի, մօր, իսկական մօր խնամքի, — վերջին խօսքը քիչ էր մնացեր արցունք հոսեցնէր Փէրիի աչքէն, բայց ան կրցաւ ինքզինքը զսպել :

Եւ Վանահայրն ու Փէրին երկար խորհեցան անոր հիւանդութեան պատճառներու և դարմաններու մասին . Փէրին իր գիտյածը միայն իր քով պահեց, բայց երկուքն ալ համաձայնութեան եկան, որ լա՛ւ, շատ լա՛ւ, պէտք էր խնամել . . .

Մամը կը վառէր սեղանին վրայ, աղօտ լոյսի մը մէջ սենեակին լուսթիւնը կը խանդարէր միայն Շահէնի ծանր շնչառութիւնը :

Որքան երկար էր գիշերը :

Փէրին՝ գինքը տանջող խոհերուն մէջ , կը հա-
յէր սեղանի ժամացոյցին վրայ , որուն պաքը կար-
ծես չէր շարժեր . յետոյ Շահէնին գէմքը կը դիտէր ,
որ երբէք միօրինակ չէր երևեր : Երբեմն մանկա-
կան գէմքի մը անմեղունակ արտայայտութիւնը
կը ստանար , երբեմն՝ դառամած ծերունիի՝ խորշոմ-
ներով ծածկուած ճակատի պէս ճերմակ մորթին ծալ-
քերը իրարու քով կը հաւաքուէին : Իսկ աւելի յաճախ,
անոր գէմքը կը ճմլուէր անկանոն ծոցերով գեանախըն-
ձորի պէս և առաջին անգամ դիտողը կը կարծէր թէ կը
ժպտի . բայց քիչ մը աւելի երկար հայելէ ետք կը
տեսնէր թէ այն ստոիճանի դառն արտայայտութիւն
կը ստանար այդ ժպտը , որ համակ լաց կը դառ-
նար , լ՛ն ու թաքուն . . . ,

Փէրին երկա՛ր , շատ երկար մտածեր էր , թէ
ի՛նչպէս պիտի վարուէր հիւանդին հետ . ինքը կը
հասկնար անոր հոգեկան վիճակը , վերջին գիշերը
չա՛տ էր տանջուեր անիկա . . . այժմ այնչա՛ր ի կ'ափ-
ստար ու կը դղջար իր վերջին թուլութեան ու
խոտովանութեան համար : Ուստի և վճռականօրէն
որոշեց . ի՛նչ ալ ըլլայ , անոր ներկայութեան երբէք ,
երբէք չլայ , այդ առաջին ամենակարևոր կէտն էր ,
իսկ երկրորդը զգացնել չտայ բնաւ թէ իրենց մէջ
ուէ միջադէպ է պատահեր , և յետոյ՝ հարկաւ շատ
քնքուշ խնամքով պիտի վարուէր հետը :

Շահէնը սկսաւ դառանցել . . . անկապ ու ան-

միտ խօսքեր կարտասանէր . . . դէմքի , մարմնի ու
անդամներու դանազան շարժումներ կ'ընէր . . .

— Ո՛չ , մե՛նք . . . մե՛նք չկա՛յ . . . կա՛յ . . .

— կը լսուէր անոր ձայնը , կը լուէր , ու յետոյ նու-
րէն՝ աւելի դայրացած .

— Սո՛ւտ է :

Փէրին խաչակնքեց հիւանդին երեսը երեք
անգամ , ապա իր երեսը , յետոյ՝ թևերը տարածեց
ու շրթունքներուն մէջէն աղօթք մը մրմնջեց . . .

Շահէնի զառանցանքը երբեմն նուազ ու մեղմ ,
երբեմն խրոխտ ու առնական կը հնչէր փոքրիկ
սենեակին մէջ . . . Փէրին ա՛լ մոռցաւ ժամացոյցին
սլաքները , կը դիտէր հիւանդի շրթունքները , սրտնք
նախ կը ճիճփայլէն և ապա անմիտ ու անկապ
խօսքեր կ'արտասանէին :

Փէրին երբ ձեռքը կը դնէր անոր ճակատին վր-
այ տաքութեան չափը խմանալու , կնճիտները կը
հաւաքուէին անմիջապէս , յետոյ ետ կը քաշուէին ,
երբ կը վերցնէր ձեռքը :

Հիւանդը ցնցուեցաւ յանկարծ ու արագ շար-
ժումով մը նստաւ մահճակալին մէջ : Սչքերը փակ
էին . նախ հանդիատ էր , յետոյ երկու թևերը տա-
րածեց օդին մէջ բան մը փնտուելու պէս :

Փէրին աթուին վրայէն ելաւ կանգնեցաւ . . .
լուսթիւնը այնպէս ճնշող էր , հիւանդին լարած
մատներով փնտուտուքը օդին մէջ այնպիսի արհա-

ւիրք մը ունէին, որ Փէրլին անգամ մըն ալ խաշա-
կընքեց երեսը :

Հիւանդը մէկէն կարասի մը պէս վիզը եր-
կարցուց : Գլուխը, ճակատը բարձր բռնեց, աչքե-
րը նախ կկոցեց, ապա լա՛նն բացաւ, ապակիի
անշարժ ու անկենդան փայտով փայլեցան մոմին
աղօտ լոյսին սակ . . . դէմ առ դէմ կեցեր էր
Փէրլին : Երբ այդ սառ հայեացքը իր դէմքին
վրայ գամուեցաւ, Փէրլին ամբողջ մարմինով
դողաց, սարսափը ահարկու էր, նայուածքը քա-
րայնող, լուսթիւնը մեռցնող . ուղեց ճշալ սրբան
ուժ ունէր, բայց զգաց իսկոյն թէ ինչ փափուկ վի-
ճակի մէջ կը գտնուէր, ելնքն ալ մնաց անշարժ . . . :

Մէկ ձայն իր կողմէն՝ կրնար մեռցնել հիւանդը :


Շահէնի լարուած բազուկները Փէրլին մօ-
տեցան . չրթունքները արագ արագ շարժուիլ
սկսան, կը ճիճփայցնէր ու օդը կը համբուրէր . . .
— Այսպէ՛ս, այսպէ՛ս . . .

Փէրլին անոր դիրկին մէջն էր . . . : հիւանդը կը
զառանցէր, կը համբուրէր, սրբան ուժ կար թող բա-
զուկներուն մէջ դէպի ինքը կը քաշէր ու կը համբու-
րէր . . . Փէրլին անշուկ կ'ենթարկուէր, հետեւիով
հիւանդին շարժումներուն . . .

— Այսպէ՛ս, այսպէ՛ս, պառկէ՛ . . .

.

Եւ երկու դլուխ միւսնոյն բարձին վրայ էին . . .



Շահէն երբ արթնացաւ, լոյս էր արդէն, վերմակին տակ՝ իր ձեռքը զգաց ուրիշի մը ասիին մէջ, իսկ դէմը՝ կանաչի դէմք մը . . . առաջին անգամէն չճանչցաւ, յետոյ կարծեց երազներու շարունակութիւնն էր ու մարած հայեացքով սկսաւ երեսը նայիլ, ճիշդ այնպէս՝ ինչպէս մանուկ մը օրօրոցի մէջէն դարձանքով ու միեւնոյն ատեն հիացումով դէմք մը կը դիտէ :

Փէրին իր ձեռքը քաշեց վերմակին տակէն, ուղեց ժպտիլ, բայց զգալով որ կեղծ կ'ըլլայ, իր լուրջ արտայայտութիւնը սրահեց նորէն : Փորձեց խօսիլ, բայց բառերը չքայտան մէկէն, քանի մը անգամ չրթունքները շարժեց, ձայն դուրս չեկաւ . . . :

Շահէնը շարժեցաւ անկողինին մէջ, կարծես, փորձելու համար թէ արթնուն է, թէ քնացած . շօշափեց անկողինը, բերանը բաց-խուր լրաւ, առատատաղը, սրտերը դիտեց ուշադրութիւնով, ամէն բան իրական կ'երևէր, նորէն Փէրին վրայ հայեցաւ . սրտուհանին առջև կեցեր էր . . .

Իրական էր . . .

Եւ սարսափած այդ միտքէն . Փէրին ներկայութենէն, երեսը դարձուց անմիջապէս դէպի սրտը, վերմակը գլուխը քաշեց, ծածկուեցաւ, աչքերն ալ փակեց :

— Ինչո՞ւ, ինչո՞ւ է ան եկեր իր սենեակը, ինչո՞ւ է եկեր, եթէ իր մայրը չէ, ինչո՞ւ է եկեր . . . ինչո՞ւ էր իր ձեռքը բռներ վերմակին տակէն . նոր

եկաւ արդեօք . . . թէ՞ գիշերն ալ հոն էր , իր քովն էր . . . գիշերը . . . այդ ի՞նչ սարսափելի գիշեր էր . . . երանի ալ երբէ՛ք գիշեր չըլլար . . . ալ երբէ՛ք չպատահէր այդպէս . . . իսկ եթէ իր մայրն է , իր հարազատ մայրը , ո՞վ ըսաւ իրեն այդ բանը . . . բայց հապա ինչո՞ւ այնպէս կը համբուրէր , այնպէս ամուր . . . — վերմակին եզրը բարձրացուց ու նայեցաւ դէպի պատուհան . — ոչ ոք չկար : Չորս կողմը դիտեց .

Մինակ էր . . .

— Ի՞նչ , ուրեմն քիչ առաջ տեսածը երանօղ էր նորէն , թէ՞ այս է երազ . . . — Թեւերը դուրս հանեց վերմակին տակէն , սկսաւ թափահարել օդին մէջ . ճիշտ էր , իրական էր , իր ձեռքն էր կը շարժէր . բայց Փէրին . . . ի՞նչ եղաւ . . . ո՞ւր դնաց . . . դնաց արդեօք , նորէն կուգայ . . .

Գիշերները միայն Փէրին պիտի հսկէր հիւանդին վրայ , իսկ ցորեկները ուրիշներ . այդ պատճառով երբ լուսացաւ , Փէրին դնաց հանգստանալու : Այդպէս աւելի լաւ էր , առիթ չէր ունենար բացատրելու . . . :

Վանահայրը երբ այցելութեան եկաւ Շահէնին քով՝ հարցուց .

— Գիշերը հանգի՞տ էիր :

Հիւանդը ոչինչ չպատասխանեց, և հայեացքը անոր ճերմակ մօրուքէն առատաղին վրայ ուղղեց անմիջապէս :

— Գիշերը հանդիսա քնացա՞ր, ս'ըլի, — հարցուց Վանահայրը կրկին՝ ձեռքը անոր ճակատին վրայ դնելով :

— Չըզիտեմ. — Պատասխանեց հիւանդը վերջին վանկը թուլցնելով՝ և երեսը դարցուց դէպի սպտը, վերմակը գլուխը քաշեց ու ծածկուեցաւ :

Վանահայրը վարդապետի երեսը նայեցաւ ու գլուխը շարժեց. բան մը հարցուց անոր, ապա երկուքն ալ լռեցին :

— Ի՞նչ բանի ախորժակ ունիս. — հարցուց Վանահայրը նորէն :

Պատասխան չկար :

— Ո՞ր տեղդ կը ցաւի :

Պատասխան չկար :

— Սխտորժակ ունի՞ս, կ'ըսեմ — սկսաւ շոյել հիւանդին գլուխը :

— Ո՞չ, ս'չ, — քիչ մը դայրացկատ շեշտով պատասխանեց վերմակին տակէն ու լռեց :

Շահէն առատաղին մէկ կէտին երկա՛ր նայելէ յետոյ՝ ըսաւ :

— Փէրի՛ . . . ճի՛շտ ըսէ . . . ա՛լ հիմայ ճիշտ կ'ըսես . . . չէ՞ :

— Ի՞նչը , — հարցուց Փէրին մեղամաղձուտ ձայնով մը :

— Փէրի՛ , ըսէ , ճի՛շտ ըսէ . . .

— Ի՞նչը , սիրելիս , — հարցուց Փէրին քնքուշ ձայնով .

— Օ՛ , այդպէ՛ս . . . դուն ինծի սիրելի՞ կ'ըսես արդէն , այդպէ՛ս . . . այդպէ՛ս . . . այդպէ՛ս ամէնէն լաւն է . . . բայց ճի՛շտ ըսէ . . .

— Կ'ըսեմ , ճիշտ կ'ըսեմ — յարեց Փէրին՝ կարծելով թէ նորէն պիտի դառանայէ :

— Կամա՛ց , կամա՛ց խօսէ , խօսին վրայ բերաւ հիւանդը շնչալով , ու դէպի դուռը նայեցաւ . կամա՛ց . . . մա՛րդ չսէ . . . — Փէրին ալ դուռին կողմը դարձաւ :

Եւ երբ երկուքն ալ լուցին , սենեակին մէջ ծա՛նր ու թանձր բան մը սաստիկ ուժով ճնշեց առնոց հողիներու վրայ :

— Ըսէ՛ , ըսէ՛ , բայց կամա՛ց , . . . կամա՛ց . . . այնքա՛ն կամայ , ու դուն ալ քու ձայնը չի լսեմ է՛ է՛ է՛ս , մարդ չկա՞յ — ու բռնեց Փէրին ձեռքը , գլուխը բարձին վրայէն վերցուց . Փէրին մօտեցաւ ու շնչաց .

— Դուն իմ . . . իմ . . . մ . . .

Չայնը երերաց շրթունքներուն վրայ ու կի-

սատ՝ հոն մնաց , բայց Փէրլին մասները աւելի ա-
մուր սեղմեց իր ափին մէջ :

— Այդ ի՞նչ խենթ խենթ խօսքեր կ'ընես , Շա՛-
հէն , հանդատացի՛ր :

— Դո՛ւն . դո՛ւն , խմ . . . խմ . . . մ . . . — շնչաց
հոյն դիրքով հիւանդը ու դարձեալ չկրցաւ մինչև
վերջը արատանել :

— Հանդատացի՛ր կ'ըսեմ , Շա՛հէն , եթէ այդ-
պէս ընես , ես կերթամ , ա՛լ քեզի պահող չըլլա՛ր . —
ըսաւ Փէրլին կարծես փոքրիկ տղայ կը համոզէր :

— Ասայո՞ . . . — հարցուց հիւանդը իր ա-
պակիի նմանող աչքերը ուղիղ Փէրլին աչքերուն
յառած :

Փէրլին լուեց :

Շահէնը քիչ մը սպասեց հոյն դիրքով . սպա-
ըսաւ .

— Ո՛ւ՛չ , . . . ո՞չ . . .

Փէրլին նորէն լուեց , իսկ լուծիւնը սաստիկ
ճնշող էր մանաւանդ հիւանդի այդ քարայնող
հայեացքին տակը :

— Ո ո՞չ . . . — հարցուց նորէն հիւանդը :

Վէրջապէս բան մը պէտք էր պատասխանել .
բայց Փէրլին կը տանջուէր հողեկան այնպիսի տան-
ջանքով , որու նմանը իր կեանքին մէջ առաջին ան-
գամ կունենար . այո՞ , թէ ոչ . ի՞նչ ըսէր , ի՞նչ պա-
տասխանէր . երկու կրակ , երկու հնոց՝ մէկը միւսէն
աւելի սաստիկ , մէկը միւսէն աւելի ահարկու , մէ-
կը միւսէն աւելի սարսափելի ու սպանիչ . .

— Դուն կը լռե՛ս . . . — շնչաց հիւանդը . . .
ինչո՞ւ կը լռես . Ինչո՞ւ կը լռես , ըսէ՛ , ըսէ՛ որ դուն
իմ . . . իմ . . . մա՛յ . . . չե՛հ՛ս . — վերջին բառը ար-
տասանեց այնպիսի ձայնով մը , որ մարդկային ձայ-
նէն աւելի՛ կը նմանէր բազէի ձանկը ին՛րած խեղճ
ճնճողուկի մը վերջին ճիչին . . .

— Ես քու մարմինդ տեսեր եմ , դիտե՞ս . . .

— Նորէ՞ն խենթ խենթ կը խօսիս , ա՛յ կեր-
թամ . — ըսաւ Փէրին պատրաստուելով սաքի կլկլ ,
Շահէն բռնեց հազուստէն .

— Այնպէ՛ս ճերմակ է՛ր . . . ես կը սիրեմ այդ
սպիտա՛կ . . . մար . . . մազերը ջուրին վրայ էին
փռուեր . . . ալիքները կը խաղային . . . կը քսուէին . . .
նախ քու մինչև մէջքդ կերեէր , յետոյ ամ-
արողջ . . . : — Հիւանդին ծնօաները կարկափեցան ,
տամները իրարու զարնուեցան . — հա՞ Փէրի , երազ
չէր , չէ՞ . . . երազ չէր , ճիշտ էր . . . ես այնպէ՛ս
կը սիրեմ քու ճերմակ . . .

— Քնացի՛ր , քնացի՛ր կը հանգստանաս :

— Օ՛ ս՛չ , քունիս մէջ ալ ես քեզի հետ եմ . . . ,
երէկ դիչեր , միասին էինք հո՞ս . . . երա՞զ էր այդ ,
այստեղ , անկողինին մէջ . . . քու մէջքդ . . . քու
մէջքդ . . . — Փէրին աչքերը վար կախեց , կը
դողար , բայց գերմարդկային ուժ կը թափէր ինք-
զինքը գապելու :

— Բոլորը երազ է, բոլորը երազ է . . . այն-
պէս չէ . . . այս ալ երազ է . . . բայց այն մէկը ե-
րազ չէր . . . այն մէկը, ծովին ափը, մութ գիշե-
րով, աստղերուն տակ . . . բայց աստղերը չսեցին . . .
հեռու էին . . . շատ հեռու, ալիքները կը խշշային,
անոնք ալ չսեցին . . . քարերն ու աւազները արդէն
չեն լսեր, ոչ մէկը չսեց, մարդ չմայցաւ . . . այն օրը
դուն ինձի ի՞նչ ըսիր, բայց չըսիր չէ, բան չըսիր . .
այդ երանգ էր, միայն երազ, դուն իմ . . . իմ . . .
մմայր . . . չե՛նս . . .

Պահ մը լուսց, թուքը կուլ տուաւ, չրթունք-
ները թրջեց լեզուով ու շարունակեց .

— Քու ազդերըդ այնպէ՛ս ողորկ էին, ճերմակ,
ճերմակ ու կտր, քու ոտքերդ աւազի մէջն էին . . .
ես ծովին տակէն եկայ, ջուրին մէջէն, ձուկերուն
հետ լողացի, վրաս հագուստ չկար . . . լողացի և
կէս մը ջուրին, կէս մը աւազին մէջ՝ քու ճերմակ ոտ-
քերը . . . բեր հո՛ս, բե՛ր հոս . . . ա՛յ, տես, այս տե՛ղ,
այս տե՛ղ . . .

Փէրին ընդդիմացաւ ոտքերը վերցնելու՝ Շա-
հէն ծուցաւ .

— Տե՛ս, տե՛ս, հո՛ս, հո՛ս . . . համ . . .

Ինկաւ յատակին վրայ յանկարծ՝ ու փաթար-
ուեցաւ Փէրին ոտքերուն . . .



IX

Փէրիին սիրտը կտտը կտտը կ'ըլլար . . . : Ան կը տեսնէր, որ Շահէնը կը մաշէր ու կը հալէր ըսպէ առ ըսպէ . իր ներկայութիւնը ա՛լ աւելի կը դրդուէր անոր արդէն բորբոքած երեւակայութիւնը . . . , դիմագիծերու իւրաքանչիւր շարժումէն ան կը հասկընար թէ ի՞նչ կը կատարուի անոր ներսի դին . . . :

Կ'ուզէր ձգել հեռանալ, որ հանդիստ մնար տղան, բայց ի՞նչպէս . . . Շահէնի վրայ մանկութեանն ունեցած կրկնակի սէրը այնպիսի հնոց մըն էին կազմեր իր կանաչի ու մայրական սիրտին մէջ . որ աւելի շուտ այս աշխարհէն, միւս բոլոր սիրելիներէն ու վայելքներէն կը բաժնուէր, քան անկէ . .

Կը սարսափէր սև ու մուայլ միտքերէն . . . ինքը դժբախտ է եղեր, դժբախտ մանաւանդ սիրոյ մէջ . . . սկիզբէ՛ն . . . և լռութեան ու միայնութեան մէջ սարսուռով կերեակայէր գերեզմա՛ն . . . կը դիտէր Շահէնին երբեմն այլայլած . . . երբեմն խաղաղ, մեղրամոմի պէս ձերմակ դէմքը . . . գերեզմաններ . . . երկո՛ւ հատ . . . քով քովի . . . : Երկուքէն ալ նոյն մուխն էր որ կը բարձրանար, դուցէ իրարու վրայ . . . իրարու մէջ . . . բայց ո՞րը որու մէջ, ո՞րն էր առաջինը արդեօք, ինքը չը դիտէր, չէր կրնար սրտել . . . : Երկուքը իրարու կը խառնուէին, իրարու մէջ կը ձուլուէին և մէկ մարմին,

մէկ էութիւնս կը կազմէին . ան ծնելէն առաջ արդէն ունէ՛ր իր մէջ . . .

Եւ Փէրին սարսափով կ'երեւակայէր . . . : Կը դիտէր նո՛ւրբ , մոմադոյն շրթունքները , անոր վրայի նօսը ընչացքը և այն նմանութիւնը . . . այն ապշեցուցիչ նմանութիւնը , որ կար այդ շրթունքներու և այն միւսին , նախորդին միջև . . . դլուխը կը դառնար մտածելէն . . . կը ստակար դիտակցելէն . . . դեռ չյզացած . . . դեռ չյզացած ինքը կը սիրէր արդէն այդ շրթունքները . . . այդ ընչացքը . . . այդ ճակատը . . . այդ փակ արտևանունքը . . . այդ չնչառութիւնն իսկ . . . : Եւ ձեռքը կուրծքին վրայ կը դնէր , ու կ'զգար սրտ , թէ ինչպէ՛ս կը մխար հոն . . . :

Ծովին վրայ փոթորիկ կար . զանգակները կէս գիշերին զօղանջել սկսան :

Շահէնը յանկարծ թեկըրը տարածեց , սրտէս թռչուն մը որ կը սաւառնի , դէմքը՛ խաղաղ արտայայտութիւն ստացաւ , բայց խելոյն փոխուեցաւ . . .

Իրեն այնպէս կը թուէր թէ զարհուրելի մութ անդունդի մը մէջ կիցնայ . կի՛ջնէ՛ , կի՛ջնէ՛ . . . անհունօրէն խո՛ր . . . : Եւ զանգակի իւրաքանչիւր տանկին ուղեղը կը փորէին կարծես , կը ցնցուէր , թեկըրը կը տարածէր , որ չիցնար , չիցնար դահավէժ . .

Ապա՝ այդ անդունդէն դաժան սզիներ իր վրայ կը յարձակէին , վա՛ր կը քաշէին . . . անոնց ստամնները ճերմակ էր ու աչքերը փայլուն , սառայելական ծիծաղով մը կը քրքջային , և այդ քը-

քիչները այնքան էլը նմանէին զանգակներու զօ-
ղանջին . . .

Շահէն փորձեց փակել ականջները , բայց ձայ-
նը աւելի խորէն , աւելի անդունդէն էլը լսուէր .

— Գը՛ը՛մ . . . գը՛ը՛մ . . .

Մէկը զգուելի ատամներով բռնեց իր կը-
րունկը ու կախուեցաւ անկէ . . . Շահէնը սարսա-
փելի ցաւ զգաց , ճշաց բարձրաձայն , իր ձայնը իր
ականջն ինկաւ , վեր թռաւ տեղէն ու վազեց ,
կծկուեցաւ սենեակին մէկ անկիւնը . . . : Աչքերը ա-
մուր փակած՝ ձեռքերը կը տարածէր օդին մէջ ,
պատերուն կը զարնէր , սաքերը կը վերցնէր ու կը
զնէր արագ , կը կծկուէր ու անկիւնը կը սեղմը-
ուէր

Այդ բոպէին՝ Շահէնի գէմքը կը նմանէր թա-
կարդն ինկած նապաստակի մը , որ իր դունչն ու
գլուխը ներս կը քաշէ , կաւզէ տեղ մը թաքնուիլ ,
բայց հնար չի գտներ . . . :

Փէրին իր քովը վազեց , ուղեց գրկել , արթըն-
ցլենել , որ չվախնայ :

Դուրսի փոթորիկը սկսաւ աւելի սաստկանալ .
չառաչալի ալիքները ծովին , ամպերու գոռոցը ու
մրրիկներու թափը ամբողջ կղզին կը դողացնէին . :

Բնութեան կատաղած տարերքներու վայնա-
ոունին մէջ՝ ա՛լ չստուեցան զանգակի զօղանջները ,
և իւրաքանչիւր անգամ՝ երբ կայծակը կը փայլա-
տակէր , կը լուսաւորէր սենեակը . և յետոյ՝ կը գո-

ուար որտառւմը, Շահէն անկիւնը կպած՝ կը դողար
երկիւզէն . . .

Փէրին գրկեց անոր վախա ու դողդապող
մարմինը :

Սուր ճիչ մը արձակեց Շահէնը ու դարհուրած
հայեացքով անոր երեսը նայեցաւ .

— Սա . . . տա . . . նա՛յ . . . սատանա՛յ . . . հե-
ռո՛ւ . . . հեռո՛ւ . . . ինծմէ . . . — կանչեց , ապա՝ մէկէն
աչքերը վառեց ու խեղճացաւ կրկնելով .

— Ես չէի . . . ես չէի . . . ես մե-
ղաւոր չեմ . . . ան չէ . . . իմ . . . իմ . . . մայր չէ՛ . . .
սո՛ւտ է . . .

Կայծակը նորէն վայեցաւ . . . բոց էր ու հր-
դեհ . . . թնդաց ուժգին պայթիւն մը աջնազէս
գոռաց երկինք , որ ամբողջ կղզին , նաև խցիկը
կարծես հզօր երկրաշարժէ մը ցնցուեցան . . . ,

Շահէն վազեց սենեակին միւս անկիւնը, կրծ-
կուեցաւ հոն , գլուխը ճանկերուն մէջ առաւ , ու
չունի մը պէս ոռնալ սկսաւ . . .

Փէրին վրան ինկաւ նորէն, գրկեց պինդ , համ-
բուրեց ու ըսաւ .

— Ե՛ս եմ , ե՛ս եմ , հո՛գիս , քու Փէրի՛դ եմ ,
քու մա՛յր Փէրի՛ն . . . մի՛ վախնար . . . մի՛ վախնար . . .
բա՛ց , բաց աչքերդ , Շահէ՛ն , ե՛ս եմ . ե՛ս . . . եմ
Շահէ՛ն , բա՛ց , բաց աչքերդ , քու սիրելի՛ն իմ . . .
քու սիրելի՛ն . . . Փէրի՛ն եմ . . .

Բայց Շահէնի լեզուն կապուեր էր

Յետոյ ուժաթափ՝ ալ ապաստան գտաւ Փէրիի գիրկին մէջ ու թաքնուեցաւ . . . :

— Շահէն, Շահէն, բայց աչքերդ . . . կ'ս կմ .
կ'ս . . . Փէրիին կմ, քու Փէրիին . . .

Շահէն անոր թևերուն մէջ բացաւ աչքերը, սառած ու սառ թիւրերը պահ մը կենդանութիւն տապան Փէրիին շունչին տակ, կարծես ուշքի եկաւ գգուանքներէն՝ և կախուեցաւ Փէրիի շրթունքներէն


Գուրար տեղատարափ անձրևը շառաչալից կ'ողողէր չորս կողմը :

Շահէն կրծձէր . . . կր ծձէր ու կր քամուէր . . . կր ցնցուէր ու կր քամուէր . . . կր հալէր, որպէս դարնայնի ճերմակ ու նօսր ձիւն արևի կիպիչ ճառագայթներուն տակ

Իսկ երբ՝ ա՛լ ջերմութիւն չի մնաց Շահէնի շրթունքներուն վրայ . . . ա՛յ ալ կրակ անոր աչքերուն մէջ . . . Փէրին խելակորոյս ու կատաղած՝ դուրս թրուաւ սննեակէն, կորաւ խաւարին մէջ — դէպի մըռնչացող ալիքները ծովի . . .

Տեանող եղեր էր, որ ան բարձրացեր էր այն ժայռին վրայ, ուր դրաւ սո՛ւր եղեր խանձարուրը . . . :





ՆՈՅՆ ՀԵՂԻՆ ԱԿԷՆ

ՄԱՐԴԻԿ ԱՐԱԾՈՒՄ ԵՆ

ՀՕ փառա

« ԽԱՏԵՆԱՇԱՐ ԱԶԳԱԿ »

1. ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԷՍ, Սիաակալիբոխ	3 50
2. ՀԱԶԻ ԲԷԳ Վրբանեա Փափազեանի	6 —
3. ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ, Դանիիկ Վարուժանի	9 —
4. ՅԱՅԳԱԼՈՅՍ, Ռ. Զարդարեանի	7 50
5. ԹԱՅԻՍ, Անարոյ Ռուանի	7 —
6. ՍԱՆԹՕ, Վրբանեա Փափազեանի	5 —
7. ԱԲՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ, Ա. Իսահակեանի	2 50
8. ՄԱՅՐԸ, Դեռնիկ Մեղրեանի	4 —

Գին ~~20~~ դր. .



2019

13643

